²² См. <http://www.panorama.am/ru/region/2011/04/26/ambassy-israel-baku/>

²³ См. <http://vesti.az/news/84633>

²⁴ См. <http://izrus.co.il/dvuhstoronka/article/2013-03-07/20666.html>

²⁵ См. <http://haqqin.az/news/7685>

²⁶ *Кербелай* – почетное именование мусульманина, преимущественно шиита, совершившего паломничество в Кербалу

скупают сотни гектаров земли. Кроме того, он обвинил горских евреев в сепаратизме. По его словам, у них есть планы вывести поселок Красная слобода на окраине Губы из подчинения местных властей и передать под управление Израиля²⁷. В 2011 г. закрыл свой бизнес в Азербайджане горский еврей миллионер Ярухом Илиев. Как сообщали СМИ, у бизнесмена отняли часть принадлежащих ему объектов, а сам он был вынужден уехать в Москву²⁸. Разрабатывающая антивирусное компьютерное обеспечение компания Symantec выяснила, что в 2012 г. компьютеры госслужащих и лоббистов в Израиле заразила вирусами группа хакеров Madi, «координационный центр» которой располагался в Азербайджане. Как показало расследование, группе Madi удалось похитить тысячи гигабайт информации²⁹. В 2014 г. некоторые бакинские супермаркеты решили прекратить продажу продукции компании Coca-Cola, полагая, что собственниками этой компании являются евреи. Бойкот, подвергнутый активному осмеянию в социальных сетях, был в итоге прекращен³⁰. В декабре 2014 г. группа неизвестных в масках совершила вооруженное нападение на дом главы религиозной общины горских евреев Азербайджана Бориса Симандуева в поселке Красная Слобода. Сам Симандуев и его сестра подверглись физическому насилию³¹.

В том же 2014-м разгорелся скандал вокруг финансирования Азербайджаном антисемитских выступлений в Европе. Специально для этой цели в Страсбурге был создан Европейский информационно-правозащитный центр (EIHRC). Как удалось выяснить Европейскому центру для журналистов (ECFJ), тогдашний начальник отдела Администрации президента Азербайджана Али Гасанов (ныне помощник президента) курировал эту антисемитскую деятельность, а некий Эйнулла Фатуллаев от имени Совета государственной поддержки неправительственных организаций при президенте Азербайджана предложил сотрудникам EIHRC крупную взятку за организацию антисемитских демонстраций и подготовку антиизраильских отчетов³².

Показательно, что в ходе строительства Зимнего бульвара в центре Баку в 2010 г. был разрушен исторический еврейский квартал. Выселяемые семьи жаловались на мизерную компенсацию за жилплощадь, не соответствующую рыночным ценам³³. Группа бакинских евреев, жителей улиц Физули и Шамси Бадалбейли, выступила с открытым письмом: «Мы приняли решение покинуть Азербайджан и вернуться на свою историческую родину – Израиль. Это трудное, тяжелое решение, в Баку мы прожили долгие годы, здесь, на историческом еврейском кладбище, похоронены наши отцы и деды. Но иного выхода в сложившейся ситуации у нас нет, не будем же мы ждать, когда в

²⁷ См. <http://www.aysor.am/ru/news/2009/09/18/azevrey/>

²⁸ См. <http://www.panorama.am/ru/economy/2011/12/05/azer-business/>

²⁹ См. <http://www.theguardian.com/technology/2012/jul/18/madi-cyber-espionage-israel>

³⁰ См. <http://russian.eurasianet.org/node/60976>

³¹ См. <http://www.contact.az/docs/2014/Social/120800099070ru.htm#.VOSZ4uaUfE0>

³² См. <http://inosmi.ru/sngbaltia/20141120/224403818.html?id>

³³ См. «Синагога горских евреев Баку нашла новое место» // <http://vesti.az/news/36233>

наши дома силой ворвутся полицейские и учинят погромы»³⁴.

Отметим также разгоревшийся в январе 2014 г. скандал вокруг Национального Героя Азербайджана, еврея по национальности Альберта Агарунова, погибшего 7 мая 1992 года на карабахской войне. В социальной сети Facebook развернулись жаркие дискуссии вокруг предоставления ему статуса «шехида» (герой, павший в бою за Родину). Азербайджанские пользователи оставляли многочисленные оскорбительные комментарии антисемитского характера, что привлекло внимание СМИ: «Какой шехид из еврея?! Лишь мусульманин может быть шехидом! А этому – гореть в аду!»³⁵, «Бог не способен помиловать представителей проклятого племени. Во всем виноваты еврейские секты». Скандал вызвал возмущение в еврейской общине, в том числе у семьи Агаруновых, которая в итоге репатрировалась в Израиль³⁶.

Многочисленные примеры антисемитизма опровергают пропагандистский тезис властей Азербайджана, будто в этом государстве (единственном в мире!) не зафиксировано ни одного случая антисемитизма. Мы имеем здесь дело с феноменом гиперкомпенсации – попытке компенсировать реальную или мнимую неполноценность, преодолевая которую актер прикладывает значительно больше усилий, чем требуется. При этом «не просто происходит избавление от чувства неполноценности, но достигается какой-то результат, позволяющий занять доминирующую позицию по отношению к другим»³⁷.

Если спроецировать это определение на сегодняшнюю ситуацию в Азербайджане, мы увидим классическое проявление гиперкомпенсации в действиях официальной пропаганды, прилагающей чрезмерные усилия, чтобы убедить мировую общественность в идеальном отношении к евреям. И здесь важно понимать, чем это чревато. Отрицание проблемы, ее замалчивание рано или поздно приведет к насилию, к неконтролируемым всплескам антисемитизма.

Ключевые слова: *Азербайджан, антисемитизм, гиперкомпенсация*

ԱՆՇԵԼԱ ԷԼԻԲԵԳՈՎԱ – Ադրբեջանում հակասեմականության հիմնախնդրի շուրջ – Ադրբեջանում հակասեմականության ու հակասիոնականության խնդիրը, ունենալով ինչպես պատմական, այնպես էլ կրոնական նախադրյալներ, պաշտոնական մակարդակով մատնված է լռության: Այնուհանդերձ, երկրում հակաիսրայելական ելույթների և կենցաղային ու հասարակական մակարդակներում հակասեմականության դրսևորումների պարբերականությունը վկայում է խնդրի առկայության մասին, որի հերքման փորձերը երևան են հանում դրա առկայությունը ներպետական մակարդակում:

³⁴ http://www.aen.ru/?page=brief&article_id=56739

³⁵ http://aen.ru/?page=brief&article_id=69630

³⁶ См. <http://minval.az/news/34068>

³⁷ **Кондаков И. М.** Психология–2000: Иллюстрированный справочник. М., 2000 // <http://dic.academic.ru/dic.nsf/psihologic/422>

Բանալի բառեր – *Աղբյուր, հակասեմականություն, գերփոխհատուցում*

ANZHELA ELIBEGOVA – *On anti-Semitism in Azerbaijan.* – Having both historical and religious background, the problem of anti-Semitism and anti-Zionism in Azerbaijan officially is silenced and replaced by actively promoted thesis of tolerance and multiculturalism. However, the frequency of anti-Israeli speeches and anti-Semitism at domestic, social level reveals the existence of the problem in the country, the denial attempts of which reveal the hypercompensation – an attempt to hide the drawback at a domestic level, applying too much effort for persuasion of foreign audiences in its absolute absence.

Keywords: *Azerbaijan, anti-Semitism, hypercompensation*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանություն - 100

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Թուրքիայի իշխանությունները հետևողականորեն շարունակում են Հայոց ցեղասպանությունը ժխտելուն ու միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելուն ուղղված աշխատանքները, որոնք իրականացվում են նոր, ժամանակակից մեթոդներով ու ամենատարբեր ուղղություններով՝ քարոզչական, դիվանագիտական, քաղաքական, գիտական և հասարակական:

Հարկ է նշել, որ հայերի նկատմամբ 1915-23 թթ. իրականացված Ցեղասպանության ժխտումը թուրքական իշխանությունների կողմից սկսվել է հանցագործության ընթացքում, և չնայած Հայոց ցեղասպանության իրողության վերաբերյալ բազմաթիվ փաստերի առկայությանը՝ թուրքական իշխանությունների ժխտողականությունը շարունակվում է մինչև օրս: Թուրքական իշխանություններն իրենց առջև հստակ նպատակ են դրել վերափոխել պատմությունը և վերահսկել Թուրքիայի ապագան, իսկ ակադեմիական շրջանակները քաղաքագետների համար Հայոց ցեղասպանության մերժման վերաբերյալ պնդումներն առաջ մղելու գիտական հարթակ են նախապատրաստում¹:

Այս առումով արժանահիշատակ է 2001 թ. մայիսի 29-ին Թուրքիայի կառավարության շրջաբերականով «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհրդի» («Asılsız Soykırım İddialarıyla Mücadele Koordinasyon Kurulu») հիմնումը, որի առաջին նախագահին էր Թուրքիայի պետնախարար և փոխվարչապետ Դևլեթ Բահչեփին, իսկ համակարգողը՝ Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարի առաջին տեղակալը: Խորհրդի գործունեության գլխավոր նպատակը թուրք հանրությանը, դպրոցական տարիներից սկսած, Հայոց ցեղասպանության պնդումների «անհիմն» լինելու վերաբերյալ տեղեկությունների հաղորդումն ու ժխտողական գիտակցության ձևավորումն է, ինչպես նաև արտերկրում պարբերաբար օրակարգ

¹ St' u **Holthouse D.**, State of Denial Turkey Spends Millions to Cover Up Armenian Genocide, Southern Poverty Law Center Intelligence Report Summer 2008:

բերվող Հայոց ցեղասպանության ճանաչման ջանքերի չեզոքացումը: Խորհրդի հիմնադիր Դ. Բահչելիից հետո այն ղեկավարել են «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) անդամներից Էրթան Մուսֆուն, Աբդուլլահ Գյուլը և Ջեմիլ Չիչեքը²:

2015 թ. ընդառաջ՝ Թուրքիայի իշխանություններն էլ ավելի են ակտիվացրել Հայոց ցեղասպանության անհերքելի փաստի դեմ պայքարը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կոշտ ժխտողական դիրքորոշում որդեգրած ներկայիս թուրք պետական գործիչները, որոնց վարած քաղաքականությունը գրեթե չի տարբերվում իրենց նախորդների ռազմավարությունից, որոշ խմբագրումներ են արել իրենց կեցվածքում և գործունեության մեջ՝ այդ կերպ փորձելով սիրաշահել հայ հանրությանը և հատկապես սփյուռքահայերին:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Թուրքիայի արտաքին քաղաքական առաջնահերթություններից են «ժողովրդական դիվանագիտության» խորացումն ու ամրապնդումը՝ միտված հայ հասարակության շրջանում թուրքերի նկատմամբ կոշտ դիրքորոշումը մեղմելուն: Թուրքիան, ինչպես Միացյալ Նահանգների, միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների աջակցությամբ և ներգրավմամբ, այնպես էլ սեփական ակտիվ նախաձեռնությամբ զանազան բնագավառներում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, երիտասարդական, կազմակերպում է, այսպես կոչված, հայ-թուրքական երկխոսությանը նվիրված միջոցառումներ (համաժողովներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ, սեմինարներ, թուրք բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներ, համերգաշարեր), ինչը նպատակ է հետապնդում նպաստել Թուրքիայի նկատմամբ ոչ միայն միջազգային հարթակներում, այլ նաև հենց Հայաստանում և Սփյուռքում թուրքանպաստ կարծիքի ձևավորմանը, ինչը, ի դեպ՝ պաշտոնական Անկարային որոշ չափով հաջողվում է: Այդ են վկայում թուրքական կողմի հրավերով հայկական պատվիրակությունների, հայ փորձագետների, լրագրողների, ուսանողների՝ վերջին շրջանում հաճախակի դարձած մասնավոր այցերը Թուրքիա:

Այս առումով ուշագրավ են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), Եվրամիության (ԵՄ), Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի կառավարության, Գերմանիայի մի շարք հիմնադրամների («Ֆրիդրիխ Էբերտ», «Ֆրիդրիխ Նաուման», «Հայնրիխ Բյոլլ») ֆինանսավորմամբ իրականացված հայ-թուրքական մերձեցման աջակցությանն ուղղված ծրագրերը, որոնք իրականում նպաստում են Թուրքիայի՝ արդեն շուրջ մեկ դար շարունակվող ուրացության պետական քաղաքականությանը և բավական հմտորեն օգտագործվում թուրքական քարոզ-

² Տե՛ս **Zarakolu R.**, Yeni hükümet ASİMKK\`yi sürdüreceek mi?, 11.07.2011, <http://www.ozgur-gundem.com>

չամբենայի կողմից: Հարկ է նշել, որ թուրքական կողմը, ժողովրդական դիվանագիտության քողի ներքո և միջազգային ոչ կառավարական, հասարակական-քաղաքական, մշակութային կազմակերպությունների ներգրավմամբ, միջոցառումների անցկացումը հիմնավորում է, իբր, հայ և թուրք հասարակությունների միջև փոխադարձ վստահության ձևավորման անհրաժեշտությամբ, մինչդեռ իրականում այդ միջոցառումները ակնհայտ ձևական բնույթ ունեն, քանի որ Թուրքիան դեռևս որևէ իրական քայլ չի կատարել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ արձանագրությունների վավերացման, հետևաբար՝ հայ-թուրքական սահմանի բացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Ավելին, 2015 թ. ընդառաջ՝ Թուրքիան ակտիվացրել է Հայոց ցեղասպանության դեմ պայքարը թե՛ քաղաքական և թե՛ ակադեմիական ուղղություններով: Այդ են վկայում Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Արընչի խոսքերը. «Լրանում է ինչպես Դարդանելի իրադարձությունների, այնպես էլ Հայոց ցեղասպանության պնդումների 100-ամյակը: Մենք լուրջ աշխատում ենք: Սիմպոզիումների, կոնֆերանսների, սեմինարների, հրապարակումների և փաստագրական ֆիլմերի օգնությամբ աշխատանքներ են տարվում: Սակայն մենք նաև հատուկ գործունեություն ենք մշակում հասարակական դիվանագիտության բնագավառում՝ աշխարհի բոլոր երկրների հասարակական կարծիքի վրա ներազդելու համար»³: Այս առումով հիշատակելի են թուրք վերլուծաբան Օրհան Քեմալ Ջենգիզի գնահատականները: Նա մասնավորապես նշում է, որ եթե Թուրքիայի կառավարությունը Հայկական հարցի վերաբերյալ աննախադեպ ու ավելի վճռական քայլերի չդիմի, անտրամաբանական կլինի 1915 թ. վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման մեջ լուրջ փոփոխություններ ակնկալել, քանի որ Բ. Արընչի հիշյալ հայտարարությունը ցույց է տալիս, որ Թուրքիայի կառավարությունը տրամադրված է կրկնել այս հարցի շուրջ պետական պաշտոնական քաղաքականությունը⁴:

Այս համատեքստում ուշագրավ է Թուրքիայի ԱԳՆ կազմում «2015» կոչվող հատուկ վարչության ստեղծումը, որն զբաղվում է 2015-ին ընդառաջ նախապատրաստական աշխատանքներով՝ ունենալով ֆինանսական բավական մեծ ռեսուրսներ⁵: Այս վարչության մշակած գործողությունների ծրագրով սահմանվում են նաև թուրք պետական, քաղաքական գործիչների վարքագծի հիմնական կանոնները:

³ Cengiz O. K., What is Turkey's 2015 strategy?, 30.01.2014, Today's Zaman օրաթերթ, http://www.todayszaman.com/columnist/orhan-kemal-cengiz_338058-what-is-turkeys-2015-strategy.html

⁴ Տե՛ս Cengiz O. K., What is Turkey's 2015 strategy?, 30.01.2014, Today's Zaman օրաթերթ, http://www.todayszaman.com/columnist/orhan-kemal-cengiz_338058-what-is-turkeys-2015-strategy.html

⁵ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Եվրամիությունն իր դրամաշնորհային ծրագրով աջակցում է ոչ թե հայ-թուրքական երկխոսությանը, այլ Թուրքիայի ուրացության քաղաքականությանը, 22.12.14, <http://www.nyut.am>

2015 թ. ապրիլի 24-ին ընդառաջ՝ Հայոց ցեղասպանության մասին խոսելիս թուրք դիվանագետները հաճախակի են օգտագործում «unfortunate relocation» (ցավալի տարահանում) եզրույթը՝ փորձելով որոշակի քննադատական դիրքորոշում ցուցաբերել: Միաժամանակ, թուրք դիվանագետները հրապարակային ելույթներում սկսել են մեջբերել Օսմանյան կայսրության մարդահամարի արդյունքները, ըստ որոնց՝ հայերի թվաքանակն իբր եղել է շուրջ 600 հազար մարդ, որ այդ տվյալներն իբր համընկնում են ամերիկացի, բրիտանացի և ֆրանսիացի դիվանագետների ներկայացրած թվերին⁶: Միաժամանակ, արհեստականորեն ուռճացվում է Թուրքիայում բռնի մահմեդականացած հայերի թիվը՝ փորձելով ներկայացնել աշխարհին, որ 20-րդ դարի սկզբին տեղի ունեցածը ոչ թե Ցեղասպանություն էր, այլ մահմեդականացում:

Բացի այդ, արտերկրում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչները սկսել են ակտիվացնել «ԱՄԱԼԱ»-ի («Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ») կողմից թուրք դիվանագետների դեմ իրականացված գործողությունների մասին շահարկումները՝ նշելով, որ իրենց կառույցի 31 աշխատակիցներն սպանվել են հայ ահաբեկիչների կողմից և իրենք, որպես տուժած կողմ, պետք է հնարավորություն ստանան բարձրաձայնելու իրենց տեսակետները⁷:

Թուրքիայի քարոզչական քաղաքականության նոր բաղադրիչներից են այսպես կոչված ազատ, բայց «պատասխանատու» թուրք մտավորականության համախմբումը, այդ պալատական մտավորականների հանրայնացումն ու վերջիններիս միջոցով թուրքական նախագծերի տարածումն ինչպես միջազգային հարթակներում, այնպես էլ Հայաստանում ու Միջուրքում: Առերևույթ ընդդիմադիր դիրքերից հանդես եկող այդ մտավորականների գործունեությունն իրականում որևէ կերպ չի վտանգում Թուրքիայի շահերը, ավելին՝ անուղղակիորեն նպաստում է Թուրքիայի հեղինակության աճին ու Ցեղասպանության համատեքստում նրա ժխտողական քաղաքականությանը: Հիշյալ մտավորականները, լինելով ուղղակի երկխոսության ջատագով, ընդունում են լոկ «ցեղասպանություն» տերմինը, սակայն խուսափում են պատժի և փոխհատուցման արդարացի պահանջի բարձրաձայնումից՝ կտրականապես դեմ լինելով Հայոց ցեղասպանության իրավական գնահատականին:

Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ թուրքական կառավարության կողմից մշակված գործողությունների ծրագրի իրականացմանն ուղղված քայլ էր նաև 2014 թ. ապրիլի 23-ին՝ Հայոց ցեղասպանության նախօրեին, Թուրքիայի ներկայիս նախագահ (այն ժամանակ վարչապետ) Ռեջեփ Էրդողանի կողմից հայերին ուղղված հայտարարությունը, որի հիմքում «ընդհանուր ցավի» թեզն էր, ըստ որի՝ «Ա-

⁶ Տե՛ս «The Armenian Allegation of Genocide: The issue and the facts», <http://www.mfa.gov.tr>

⁷ Տե՛ս նույն տեղը:

ռաջին աշխարհամարտի տարիներին ցավալի դեպքեր են տեղի ունեցել, որին զոհ են գնացել ոչ միայն հայերը, այլ նաև թուրքերն ու այլ մուսուլմաններ, իսկ այդ ցավը բոլորին է»⁸, այդպիսով խուսափելով հայերի զանգվածային կոտորածներն ու հայրենագրկումը կոչել ցեղասպանություն, ինչպես նաև փորձելով հայերի «ցավը» տեղավորել Առաջին աշխարհամարտի շրջանակներում և հավասարեցնել թուրքերի կորուստներին: Հարկ է նշել, որ հենց Թուրքիայի հայ համայնքի որոշ ազդեցիկ ներկայացուցիչների կողմից Ռ. Էրդոդանի հիշյալ հայտարարությունը որակվել է որպես «հայերի առջև նետված ոսկորի կտոր»: Թուրքիայի մշակած մարտավարության տեսանկյունից է դիտվում նաև Ռ. Էրդոդանի հայտարարությունից հետո՝ 2014 թ. երկրորդ կեսից, Թուրքիայում Հայոց ցեղասպանության ժխտողականությամբ հայտնի «Թուրքական պատմագիտական ընկերության» կողմից իրականացվող որոշ ծրագրերի ֆինանսավորումը դադարեցնելը: Միաժամանակ, Ռ. Էրդոդանի հիշյալ հայտարարության համատեքստում հատկանշական է 2014 թ. ապրիլին Թուրքիայում Ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ հակաքայլեր մշակելու և պաշտոնական Անկարայի ժխտողական քաղաքականությունն առաջ մղելու նպատակով հատուկ խմբի ստեղծումն ու դրա ղեկավարի պաշտոնում Ռ. Էրդոդանի գլխավոր խորհրդական Իբրահիմ Քալընի նշանակումը⁹:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ՝ թուրքական գործողությունների ծրագրով, որում կրկին շրջանառության մեջ է դրվել հարցը պատմաբաններին թողնելու թեզը, հատկապես կարևորվում է արտերկրում Թուրքիայի արտաքին հանձնաժողովների անդամների կողմից լոբբինգի իրականացումը: Միաժամանակ լուրջ դերակատարություն է վերապահված թուրքական լոբբիստական կազմակերպություններին, որոնք աշխարհի տարբեր, հիմնականում հայաշատ համայնքներ ունեցող երկրներում ակտիվ գործունեություն են ծավալում: Այսպես, թուրքական լոբբին գգալիորեն ակտիվացրել է աշխատանքները (ժխտողական բովանդակությամբ գրքերի հրատարակում, համաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների անցկացում) թե՛ ԵՄ երկրներում (Գերմանիա, Նիդեռլանդներ) և թե՛ Միացյալ Նահանգներում՝ ի դեմս «Թուրք-ամերիկյան միությունների ասամբլեայի» (ATAA)¹⁰:

Թուրքիայի կողմից մշակված մարտավարության տեսանկյունից պետք է դիտարկել ս.թ. հունվարի 15-ին Անկարայում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպումից հետո՝ համատեղ մամուլի ա-

⁸ «The unofficial translation of the message of the Prime Minister of The Republic of Turkey, Recep Tayyip Erdoğan, on the events of 1915, 23 April 2014», <http://www.mfa.gov.tr>

⁹ Տե՛ս <http://www.ensonhaber.com>

¹⁰ Տե՛ս <http://www.ataa.org>

սուլիսի ժամանակ, նախագահ Ռ. Էրդոդանի հայտարարությունը Դարդանելի ճակատամարտի 100-ամյակին նվիրված միջոցառումները ս.թ. ապրիլի 24-ին մեծ շուքով նշելու վերաբերյալ¹¹, ինչը նպատակ է հետապնդում համաժամանակյա և զանգվածային միջոցառումների անցկացմամբ հակակշռելու և ստվեր գցելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների վրա (միաժամանակ ուշագրավ է, որ Դարդանելի օպերացիան ներկայացվում է որպես լեգենդ, այսպես կոչված, «թուրք-հայկական եղբայրության» մասին):

Հարկ է նշել, որ Թուրքիայի իշխանությունները խիստ կարևորում են Հայոց ցեղասպանությունը ժխտելու և հայկական Մփյուռքի նախաձեռնություններին հակազդելու հարցում Ադրբեջանի քարոզչական հնարավորությունների օգտագործումը: Այս ուղղությամբ պաշտոնական Անկարայի և Բաքվի կողմից Հայաստանին հայտարարված քարոզչական պատերազմի հիմնական նպատակը միջազգային հանրության ապատեղեկացումն է դարաբաղյան հիմնախնդրի իրական բովանդակության վերաբերյալ, իսկ թուրքական ուղղությամբ՝ Հայոց ցեղասպանության ճանաչման արդարացի պահանջին հակազդելը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի համատեքստում թուրք-ադրբեջանական հարաբերությունների առերևույթ լարվածությունն ի սկզբանե համաձայնեցված է եղել պաշտոնական Բաքվի և Անկարայի միջև՝ միտված հայ-թուրքական հարաբերությունների և Ղարաբաղյան հիմնախնդրի համընթաց կարգավորմանը: Մասնավորապես, Թուրքիան և Ադրբեջանը միմյանց միջև «լարվածություն» ցուցադրելու միջոցով փորձում են ազդել տարածաշրջանում լուրջ դերակատարություն ունեցող երկրների դիրքորոշման վրա՝ վերջիններիս դրդելով ընդունել Ղարաբաղյան հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փոխկապակցվածությունը:

Արդի փուլում պաշտոնական Անկարան շարունակում է ջանքեր գործադրել հակահայկական աշխատանքներում ադրբեջանական ներգրավվածության ընդլայնման ուղղությամբ: Նման դրսևորումներից է Հայոց ցեղասպանության դեմ գործողությունների ծրագրի մշակման և համակարգման աշխատանքներում ադրբեջանական լոբբիստական կառույցների ընդգրկումը:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը խոչընդոտելու խնդրում Թուրքիա-Ադրբեջան համագործակցությունն ընթանում է բավականին արդյունավետ: Հակահայկական քարոզչության հիմնական բաղկացուցիչների կայացման և զարգացման ուղղությամբ իրականացվող հետևողական աշխատանքները հանգեցրել են Թուրքիայի և Ադրբեջանի կողմից լոբբինգի կազմա-

¹¹ Տե՛ս **Zeyrek D.**, Turkey invites Armenian president to 100th anniversary of Gallipoli War, 16.01.2015, <http://www.hurriyetdailynews.com>

կերպման ոլորտում ուժերի հավասարակշռմանն ու երկուստեք փոխ-
շահավետ մոտեցումների ձևավորմանը: Մասնավորապես, Ադրբեջա-
նը սեփական քարոզչական հնարավորությունների օգտագործմամբ
շարունակում է մասնակցություն ցուցաբերել Հայոց ցեղասպանության
ժխտման պաշտոնական Անկարայի ակտիվացող հակահայկական
նախաձեռնություններին, օրինակ՝ միջազգային ասպարեզում այսպես
կոչված «Խոջալուի ցեղասպանությունը» Հայոց ցեղասպանության ճա-
նաչման պահանջներին հակադրելու մարտավարությամբ: Վերջին տա-
րիներին Թուրքիայում «Խոջալուի դեպքերը» դատապարտող լայնածա-
վալ ցույցեր անցկացնելն ու այդ ուղղությամբ Թուրքիայի դրսևորած ակ-
տիվությունը թուրքական կողմը դիտում է որպես առաջիկայում Հայոց
ցեղասպանության ճանաչման դեմ ադրբեջանական քարոզչական նե-
րուժի հնարավորինս ընդլայնված մասնակցության ապահովում:

Այս առումով ուշագրավ է Թուրքիայում գործող և Ադրբեջանից ֆի-
նանսավորվող հակահայկական «Հայկական անհիմն պնդումների դեմ
պայքարի միություն» (ASIMDER) կազմակերպության գործունեությու-
նը¹², որի նպատակը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի
շրջանակներում Սփյուռքի գործողություններին հակազդելն է: Այս
կազմակերպությունը, որի կենտրոնակայանն Իզմիրում է, ներկայա-
ցուցություններ ունի Գերմանիայում, Իրանում և Ադրբեջանում (Նա-
խիջևանում), ինչպես նաև Թուրքիայի 12 նահանգներում: Հարկ է նշել,
որ միության նոր մասնաճյուղեր են բացվում Թուրքիայի բոլոր շրջաննե-
րում և արտերկրում: Կազմակերպության ղեկավարն է Թուրքիայի կառա-
վարական շրջանակների, ինչպես նաև Թուրքիայում ադրբեջանցի դիվա-
նագետների հետ լայն կապեր ունեցող Գյոքսել Գյուլբեյր, որը կազմակեր-
պության գործունեությունը համաձայնեցնում է ադրբեջանական կողմի
հետ: Կազմակերպությունը լայն աջակցություն է ստանում Ստամբուլում
և Կարսում՝ Ադրբեջանի գլխավոր հյուպատոսություններից:

Միության հոչակած ռազմավարական հիմնական նպատակներից
են Հայոց ցեղասպանության ժխտումը, քրդերի հետ հայերի հարաբերութ-
յունների սրումն ու քրդերին հայերի դեմ օգտագործելը, Թուրքիայի ար-
ևելյան շրջանների նկատմամբ հայերի պահանջատիրության չեզոքացու-
մը, քարոզչական նպատակներով «ԱՍԱԼԱ»-ի գործունը, հայերի դեմ պայ-
քարում թուրք-ադրբեջանական համագործակցության խորացումը:

Հարկ է նշել նաև, որ 2012 թ. միությունը համատեղ գործունեութ-
յան համաձայնագիր է կնքել ադրբեջանական «Իրավունքի և արդար-
ության ասոցիացիայի», իսկ 2013 թ.՝ «Ադրբեջանական սփյուռքի մի-
ջազգային կենտրոնի» հետ: Բացի այդ, 2014 թ. օգոստոսին փոխհամա-
գործակցության համաձայնագիր է ստորագրել Վիեննայում գործող
«Ադրբեջանի մշակույթի և գործարարների կազմակերպության» հետ՝

¹² Տե՛ս <http://asimder.org.tr>

նպատակ հետապնդելով 2015 թ. Եվրոպայում հակահայկական տրամադրություններ ստեղծել ու պայքարել հայկական լոբբիի դեմ¹³:

Հայոց ցեղասպանության ժխտման ուղղությամբ պաշտոնական Անկարայի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականության գործուն քաղկացուցիչներից է սփյուռքահայ համայնքներում տարվող աշխատանքը, ընդ որում՝ Թուրքիայից տեղափոխված հայերի ակտիվ ներգրավմամբ, ինչը նպատակ է հետապնդում որոշակի հակասություններ առաջացնել ինչպես հայ համայնքների ներսում, այնպես էլ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում:

Վերոհիշյալի մասին է փաստում 2011 թ. սեպտեմբերին Թուրքիայի արտաքին գործերի նախարարության կողմից արտերկրում Թուրքիայի արտակարգ և լիազոր դեսպաններին ուղարկված շրջաբերականը՝ 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին պատրաստվելու և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ ակտիվ քարոզչություն իրականացնելու պահանջով, որում, հիշեցնելով Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ համայն աշխարհում Սփյուռքի կողմից իրականացվող աշխատանքների մասին, Թուրքիայի ԱԳՆ-ը դեսպաններից ակնկալում է Սփյուռքի հետ սերտ շփումների մեջ մտնելով՝ արգելք լինել այդ գործողություններին:

Այս համատեքստում ուշագրավ է Թուրքիայի իշխանությունների կողմից «սփյուռք» բառի վերաիմաստավորման կամ վերասահմանման ռազմավարությունը: Հիշենք դեռևս 2011 թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի դեսպանների հետ տարեվերջյան 4-րդ կոնֆերանսի ժամանակ արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի ելույթը. «Երբ ես գնացի ԱՄՆ, հանդիպեցի այնտեղի մեր դեսպանների և գլխավոր հյուպատոսների հետ ու նրանց հետևյալ հրահանգը տվեցի. մենք պետք է փոխենք «սփյուռք» հասկացությունը: Անկախ կրոնից և հավատքից՝ Անատոլիայի հողերից գաղթած յուրաքանչյուր անհատ մեր սփյուռքն է: Որտեղ մեկ հայ կա, գնալու և խոսելու ենք նրա հետ մեր համատեղ պատմության մասին, այն մասին, թե ինչպես ենք 10 դար միասին ապրել: Նախ շահելու ենք հայերի, մեր հայ բարեկամների սիրտը: Զրուցելու ենք ամեն մի հայի հետ»¹⁴:

Այս առումով հատկանշական է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ արձանագրությունների ստորագրմանը զուգահեռ Թուրքիայի գիտակրթական հաստատություններից ասպիրանտների գործուղումը Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներ՝ հայկական համայնքներում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: Ընդ ո-

¹³ Տե՛ս <http://asimder.org.tr>

¹⁴ **Kanbolat H.**, Turkish citizenship for Armenian diaspora, 26.12.2011, <http://www.todayszaman.com>

րում, թուրք գիտնականները, քողարկելով իրենց բուն առաքելության նպատակը, դա բացատրել են ազգային փոքրամասնությունների վերաբերյալ թեկնածուական աշխատանքներ գրելու հանգամանքով:

Այս համատեքստում ուշագրավ են վերջին շրջանում որոշ խոշոր հայկական գաղթօջախներում տեղի ունեցող գործընթացները, մասնավորապես թուրքահայերի նախաձեռնությամբ նոր կազմակերպությունների ստեղծումը, որոնք գործում են համայնքային մյուս կառույցներից անկախ՝ էապես վնասելով Սփյուռքի կառույցների միասնությանը:

2014 թ. ապրիլին քեսաբահայությանն ապաստան տրամադրելու թուրքական իշխանությունների պատրաստակամության ցուցադրումը ևս կարելի է դիտել որպես Թուրքիայի կողմից իրականացված քարոզչական հնարք՝ ուղղված Հայոց ցեղասպանության տարելիցի նախօրեին միջազգային ասպարեզում Թուրքիան մարդասիրական դիրքերից ներկայացնելուն, այդ թվում՝ Սիրիայում տեղի ունեցող գործընթացներում, մասնավորապես Քեսաբում տեղի ունեցած իրադարձությունների շուրջ Թուրքիայի հասցեին հնչող քննադատությունները մեղմելուն ու նրա պատասխանատվությունը չեզոքացնելուն: Սակայն, Թուրքիայի իրական նկրտումները քողազերծվեցին Սիրիայում 2014 թ. սեպտեմբերի 21-ին «Իսլամական պետություն» խմբավորման կողմից Ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված Դեյր Ջորի Սրբոց նահատակաց հայկական եկեղեցու պայթեցման գործում թուրքական հետքի մասին շրջանառվող տեղեկություններով:

Թուրքական մարտավարության բաղկացուցիչներից է նաև պոլսահայ հայտնի գրող, լրագրող, վերլուծաբան Էթեն Մահչուփյանի նշանակումը Թուրքիայի վարչապետ Ա. Դավութօղլուի գլխավոր խորհրդականի պաշտոնում¹⁵, ինչը միջազգային մեծ արձագանք է ստացել և դիտվել է որպես աննախադեպ քայլ Թուրքիայի պատմության արդի փուլում:

Այսպիսով, Թուրքիայի իշխանությունները մարտավարական նոր մոտեցումներով և նախաձեռնություններով, այդ թվում՝ վերջին տարիներին ակտիվորեն շրջանառության մեջ դրված ժողովրդական դիվանագիտության գործադրմամբ շարունակելու են Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը՝ ամեն կերպ փորձելով լուծել Հայաստանի հետ հարաբերություններում Թուրքիայի ազգային անվտանգության համար վտանգ ներկայացնող թիվ մեկ խնդիրը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի կասեցման հարցը: Ավելին, Թուրքիան Ադրբեջանի հետ սերտ համագործակցությամբ շարունակելու է հնարավորինս օգտագործել միջազգային հեղինակավոր ամբիոնները հակահայկական քարոզչության և ՀՀ-ի շուրջ բացասական վերա-

¹⁵ Տե՛ս «Armenian Journalist Named Chief Advisor to Turkey's Prime Minister», 27. 01. 2014, <http://asbarez.com/128273>

բերմունք ձևավորելու ուղղությամբ՝ կյանքի կոչելու միջազգային հարթությունում քաղաքական, տնտեսական երկկողմ և բազմակողմ ձևաչափերից Հայաստանի մեկուսացմանը միտված ծրագրերը:

Բանալի բառեր – *Թուրքիա, Հայոց ցեղասպանություն, Ժխտողական քաղաքականություն, գործողությունների ծրագիր, թուրքական քարոզչական քաղաքականություն, «բռնի տարհանում», թուրքական լոբբիստական կառույցներ, թուրք-ադրբեջանական համագործակցություն, հայկական սփյուռք*

АРМИНЕ ОВСЕПЯН – Новые явления в турецкой политике отрицания Геноцида армян. – В преддверии 100-летней годовщины Турция по-прежнему последовательно отрицала Геноцид армян и всячески препятствовала его международному признанию. Новые подходы турецких властей реализовались как в политической, так и в академической сфере. На первый план выдвинулась народная дипломатия, стал делаться усиленный акцент на тезисы о вынужденной депортации армян в военное время и «общей боли», призванные смягчить принципиальную позицию армянской стороны. В расчёте создать разногласия между Арменией и диаспорой всячески обрабатывались отдельные представители последней. Чтобы дезорганизовать мероприятия, приуроченные к 100-летию геноцида, Турции готовилась синхронно провести свои массовые мероприятия. Значительно активизировалась работа действующих за рубежом лоббистских организаций, максимально использовалась азербайджанская пропаганда.

Ключевые слова: *Турция, Геноцид армян, политика отрицания, программа действий, турецкая пропагандистская политика, «вынужденная депортация», турецкие лоббистские организации, турецко-азербайджанское сотрудничество, армянская Диаспора*

ARMINE HOVSEPYAN – The Modern Demonstrations of the Armenian Genocide Denial Policy in Turkey. – On the eve of the Armenian Genocide centennial Turkey’s government consistently continues its denial policy and makes efforts against recognition and towards suspension of recognition processes of the underlying activities, that are carried out with new approaches and initiatives in both political and academic spheres.

This is evidenced when, ahead of the year 2015, Turkey carries out an action plan with segments deepening and strengthening of its recent public diplomacy of usage of some “unfortunate relocation” and “shared pain” thesis, thus, aiming at lowering the public tough stand against Turks in Armenian society; carrying out some covert activities with the Diaspora representatives thus creating a gap between Armenia and Diaspora; to counteract and cast a shadow to the Armenian Genocide commemoration activities by carrying out synchronous and mass events; denial of the Armenian Genocide and counteraction to Armenian Diaspora efforts of the Armenian Genocide recognition via activation of Turkish lobby abroad and Azerbaijani propaganda opportunities.

Key words: *Turkey, the Armenian Genocide, denial policy, action plan, Turkish propaganda policy, “forced deportation”, Turkish lobbyist organizations, Turkish-Azerbaijani cooperation, Armenian Diaspora*

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԻՈՍՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՑՄԱՆ

Երկխոսության հիմնախնդիրը՝ որպես գիտական հետազոտության օբյեկտ, մի շարք հումանիտար գիտությունների, այդ թվում և քաղաքագիտության ուսումնասիրության առարկա է: Ընդ որում, քաղաքագիտական հետազոտություններում հիմնական ուսումնասիրությունները կատարվում են քաղաքական կոմունիկատիվիստիկայի շրջանակներում, և դա, բնականաբար, տրամաբանական է, քանի որ երկխոսությունը քաղաքականության մեջ գծային հաղորդակցում, հաղորդակցական գործընթացի մասնակիցների միջև սոսկ մտքերի փոխանակում կամ էլ պարզ շփում չէ, այլ ավելի բարդ երևույթ է: Որո՞նք են երկխոսության հաղորդակցական ներուժն ու նրա դրսևորման առանձնահատկությունները: Այդ հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է դիտարկել քաղաքական հաղորդակցման հիմնական հայեցակարգերը ու այդ լույսի ներքո ներկայացնել երկխոսության քաղաքական հաղորդակցման առանձնահատկությունները:

Պետք է նշել, որ քաղաքագիտության մեջ քաղաքական հաղորդակցության հիմնախնդիրների ուսումնասիրման միմյանցից տարբերվող շատ մոտեցումներ ու տեսական հայեցակարգեր կան: Եթե ընդհանրացնելու լինենք այդ բոլորը, ապա դրանք կարող ենք բաժանել երկու մեծ խմբերի՝ քաղաքական հաղորդակցման գծային ու ոչ գծային հայեցակարգերի:

Գծային հայեցակարգերը լայն զարգացում ու գործնական կիրառություն գտան հատկապես կիրբեռնետիկայի բնագավառում: Ն. Վիները գիտական լայն շրջանառության մեջ դրեց «հաղորդակցություն» հասկացությունը՝ կիրբեռնետիկան սահմանելով որպես գիտություն կառավարման ու կապի (հաղորդակցության) մասին¹: Ընդ որում, ըստ Ն. Վիների, ինչպես անկենդան, այնպես էլ կենդանի բնության ու հասարակության մեջ ընթացող բոլոր գործընթացները կարելի է ներկայացնել տեղեկատվության փոխանակման, պահպանման ու վերամշակման տեսքով²: Հասարակության սոցիալ-քաղաքական պրակտիկայում «հաղորդակցություն» երևույթի բացահայտման համար Ն. Վին-

¹ Տե՛ս **Винер Н.** Кибернетика, или Управление и связь в животном и машине. М., 1983, էջ 17:

² Տե՛ս նույն տեղը:

ներն արդեն իր հաջորդ աշխատության մեջ³ զարգացնում է տեղեկատվական (հաղորդակցական) հասարակության գաղափարը, որտեղ տեղեկատվությունն ու հաղորդակցությունը համարվում են ձևավորվող տեղեկատվական (հաղորդակցական) հասարակության հիմնական արժեքները: Ն. Վիները տեղեկատվության ստացումն ու օգտագործումը արտաքին միջավայրի պատահականություններին հարմարվելու ու այդ միջավայրում մարդու կենսագործունեության ձև է համարում, հետևաբար՝ հասարակության մեջ զանազան տեղեկատվական հոսքերի նկատմամբ պահանջները գնալով մեծանում են, իսկ կյանքի որակն ուղղակիորեն առնչվում է «սպառած» տեղեկատվությանը, քանի որ կյանքի արդյունավետությունը կախված է ճիշտ տեղեկատվությունից⁴:

Ն. Վիների հաղորդակցական մոդելի գծայնությունը նախնառաջ այն է, որ նոր ձևավորվող հասարակությունում Homo communicans-ը (հաղորդակցվող մարդը) իրեն շրջապատող աշխարհում կողմնորոշվում է ոչ այնքան սեփական զգացմունքների և ընկալումների շնորհիվ, որքան արտաքին միջավայրից եկող ազդակներին ու իրադարձություններին արձագանքելու կարողության հաշվին: Իսկ այդ դեպքում արդեն առաջնահերթ են դառնում հաղորդակցության միջոցները, որոնք էլ հենց այն հիմնական գործիքներն են, որոնց օգնությամբ մարդն արձագանքում է շրջակա միջավայրի փոփոխություններին⁵: Բացի այդ, հաղորդակցության գծայնությունը արտահայտվում է նաև քաղաքական հաղորդակցման վիներյան սահմանման մեջ, որտեղ այն ներկայացվում է քաղաքականության վրա էական ազդեցություն գործող հաղորդագրությունների ստեղծման, ուղարկման, ստացման ու մշակման տեսքով⁶: Քաղաքական հաղորդակցման գծային հայեցակարգերը հետագայում զարգացում ստացան նաև Կ. Դոյչի⁷, Հ. Լասսուելի⁸, Ջ. Գերբների⁹, Կ. Շենոնի, Ու. Ուիվերի¹⁰ և այլոց աշխատություններում:

Կ. Դոյչը ողջ քաղաքական համակարգի գործունեության մեջ առաջնային էր համարում մասնավորապես հենց տեղեկատվական-հաղորդակցական ենթահամակարգի գործունեությունը՝ քաղաքական համակարգը սահմանելով որպես տեղեկատվական ու հաղորդակցա-

³ Տե՛ս **Винер Н.** Человек управляющий: человеческое использование человеческих существ. М., 2001:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 14:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 12:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս **Дойч К.** Нервы управления. Модель политической коммуникации. М., 1993:

⁸ Տե՛ս **Lasswell H.** Structure and Function of Communication in Society (ed. by J. Bryson. The Communication of Ideas), N.Y. 1948.

⁹ Տե՛ս «Модели СМК: модель культивирования Гербнера» // "Психология общения. Энциклопедический словарь". М., 2011. [www.vocabulary.ru]:

¹⁰ Տե՛ս «Модели СМК: модель Шенона-Уивера» // "Психология общения. Энциклопедический словарь" // [www.http://vocabulary.ru/dictionary/1095/word/modeli-smk-model-shenona-uivera]:

կան հոսքերի յուրատեսակ ցանց¹¹:

Քաղաքական հաղորդակցման Հ. Լասսուելի առաջարկած հայեցակարգը¹², թերևս, դասական կարելի է համարել գծային հաղորդակցման մոդելների շարքում: 1948 թ. նա առաջադրեց իր հայտնի 5W հաղորդակցական մոդելը, որը մշակել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զինվորական ստորաբաժանումների հետ տարվող քարոզչական աշխատանքների փորձի հիման վրա: Հավանաբար դրանով կարելի է բացատրել լասսուելյան մոդելի գծայնությունն ու միակողմանիությունը, քանի որ ռազմական ոլորտում հաղորդակցությունը նախևառաջ կառուցվում է «հրաման-ենթարկում» կառուցակարգի հիման վրա, որի միակողմանի ուղղվածությունը հաղորդակցական գործընթացը դարձնում է սուբյեկտ-օբյեկտ փոխհարաբերությունների համակարգ, իսկ հստակ ընդգծված քարոզչական բաղադրիչն էլ ավելի է ընդգծում հաղորդակցության մենախոսային բնույթը: Չնայած դրան՝ այնուամենայնիվ հաղորդակցական այդ մոդելը մեծ ճանաչում ձեռք բերեց հատկապես գործնական կիրառելիության տեսանկյունից, քանի որ այն թույլ էր տալիս ուսումնասիրել զանգվածային հաղորդակցության գրեթե բոլոր տեսակները, ներառյալ քաղաքական գովազդը, քարոզչությունը, PR գործունեությունը և այլն: Հ. Լասսուելի հաղորդակցական «պենտագոն» հենվում էր հինգ հարցերի վրա՝ ո՞վ է հաղորդում (who says), ի՞նչ է հաղորդում (what says), ո՞ւմ է հաղորդում (whom), ի՞նչ խողովակներով (what channels) և ի՞նչ արդյունավետությամբ (what effects): Այս հարցադրումների հիման վրա էլ ամերիկացի գիտնականը կառուցում է հաղորդակցության վերլուծական մի մոդել, որի կառուցվածքային տարրերից յուրաքանչյուրը պատասխանում է վերոնշյալ հարցադրումներից մեկին: Հ.Լասսուելը հետագայում ավելի կատարելագործեց իր մոդելը՝ ավելացնելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ո՞վ, ի՞նչ նպատակներով, ի՞նչ իրավիճակում, ի՞նչ ռազմավարությամբ, ի՞նչ լսարանի համար և ի՞նչ արդյունավետությամբ¹³:

Բովանդակային առումով լասսուելյան մոդելին բավական նման է նաև Կ. Շենոնի և Ու. Ուիվերի առաջարկած հաղորդակցության կառուցակարգը, որը նույնպես բաղկացած է գծային հաղորդականությամբ տեղակայված հինգ բաղադրիչներից՝ 1. տեղեկատվության աղբյուր, 2. հաղորդիչ, 3. փոխանցման ալիք, 4. ընդունիչ, 5. նշանակման վայր¹⁴: Այս մոդելի հիմնական «նորարարությունը» այն էր, որ ամերիկյան հեղինակները առանձնացնում էին մոդելը գործառելու ևս երկու՝ տեղեկատվա-

¹¹ Տե՛ս *Дойч К.*, նշվ. աշխ., էջ 12:

¹² Տե՛ս *Lasswell H.*, նշվ. աշխ.:

¹³ Ավելի մանրամասն տե՛ս *Lasswell H.* The Uses of Content Analysis Data in Studying Social Change // Science and Culture. 1967, Vol. 33, № 4:

¹⁴ Տե՛ս «Модели СМК: модель Шенона-Уивера» // [www.http://vocabulary.ru/dictionary/1095/word/modeli-smk-model-shenona-uivera]:

կան «ադմուկի» և տեղեկատվության «ավելցուկի» գործոնները¹⁵: Առաջինի օգնությամբ հիմնականում բացատրվում էին տեղեկատվության փոխանցման ընթացքում առաջացած շեղումները, իսկ երկրորդի օգնությամբ փորձ էր արվում կանխելու հաղորդակցության անհաջողությունները տեղեկատվության պարբերաբար կրկնելու միջոցով:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք գծային հաղորդակցական մոդելները, ապա կարող ենք առանձնացնել հետևյալ առանձնահատկությունները.

1. գծային հաղորդակցության մոդելներն ունեն հստակ ընդգծված միակողմանի ուղղվածություն՝ հաղորդագրություն ուղարկողից (կոմունիկատոր) դեպի հաղորդագրություն ստացողը (կոմունիկանտ). դա ենթադրում է հաղորդագրությունների ուղարկում միասնական կենտրոնից դեպի հանրային մեծ լսարան:

2. Որպես կանոն՝ հաղորդակցությունը գծային մոդելները դիտում են որպես սուբյեկտ-օբյեկտ փոխհարաբերությունների համակարգ, որի ընթացքում հաղորդակցական շղթայի մասնակիցների միջև ձևավորվում են անհամաչափ փոխհարաբերություններ:

3. Դրանք հիմնականում մեխանիստական բնույթի են և այդ մեխանիստական մոտեցման պարզ արտացոլումն են քաղաքական հաղորդակցման համատեքստում:

4. Հաղորդակցության գծային մոդելների մենախոսային բնույթը էապես սահմանափակում է քաղաքական հաղորդակցման արդյունավետությունը:

5. Իշխանության հիերարխիկ ու խիստ ուղղահայաց կառուցակարգի դեպքում առավել հաճախ են կիրառվում հաղորդակցման գծային, մենախոսային մոդելները, որոնք լիովին տեղավորվում են իշխանության հաղորդակցական ռազմավարության նախընտրած տրամաբանության մեջ:

6. Ընդհանուր առմամբ այս մոդելներում թույլ է արտահայտված կամ իսպառ բացակայում է հետադարձ կապի սկզբունքը, որը գործնական կիրառելիության ու արդյունավետ քաղաքական հաղորդակցման հաստատման տեսանկյունից խոցելի է դարձնում հաղորդակցման գծային կառուցակարգը:

Վերոնշյալ բացը լրացնելուն են ուղղված քաղաքական հաղորդակցման ոչ գծային մոդելները, որոնց տեսական մշակումներն ու քաղաքական պրակտիկայում ակտիվ ներդրման փորձերը սկսվեցին XX դարի 60-ականներից: Բանն այն է, որ մինչ այդ գծային հաղորդակցմանը բնորոշ քաղաքական հաղորդակցման իմպերատիվ-խթանիչ բնույթը լիովին համապատասխանում էր տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրողություններին, երբ զանգվածային հաղորդակցման միջոց-

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

ներն ու տեխնոլոգիաները նոր էին մուտք գործել հասարակություն, ու մարդիկ այդ փուլում ավելի շատ հանդես էին գալիս տեղեկատվական-հաղորդակցական հոսքերի ակտիվ սպառողների դերում: Սակայն հետագայում հասարակության քաղաքական կյանքում սկսում են կարևոր դեր կատարել քաղաքական հաղորդակցման ինտերակտիվ, երկխոսությանին մոդելները, որոնք շահեկանորեն տարբերվում են գծային, մենախոսային հաղորդակցման կառուցակարգերից:

Այդ տեսակետից Ու. Շրամը առաջիններից մեկը սկսեց ուշադրությունը կենտրոնացնել հետադարձ կապի սկզբունքի վրա ու կարևորել հաղորդակցության գործընթացը հենց այդ տեսանկյունից¹⁶: Քննադատելով գծային հաղորդակցման մոդելների միակողմանիությունը ու հաղորդակցության գործընթացի մասնակիցների միջև հստակ դերաբաժանումը՝ նա գտնում է, որ «նման մոտեցումները ձևավորում են սխալ պատկերացումներ այն մասին, որ հաղորդակցական գործընթացն ինչ-որ տեղ սկսվում ու ինչ-որ տեղ վերջանում է: Իրականում այն անվերջ է: Հսկայածավալ տեղեկատվական անվերջանալի հոսքերի կառավարման ու վերահասցեագրման գործում մեզնից յուրաքանչյուրը յուրատեսակ վերաբաշխիչ կենտրոն է»¹⁷: Այն, որ հաղորդակցման գործընթացը անվերջանալի շրջապտույտի տեսք ունի, որտեղ անընդհատ տեղի են ունենում դերային փոխատեղումներ, շատ կարևոր դիտարկում է, սակայն, ինչպես նշում է ռուս հեղինակներից Մ. Գրաչովը, Շրամի հաղորդակցական մոդելում մի փոքր չափազանցված է հաղորդակցության համաչափությունը: Սա հատկապես նկատելի է, երբ խոսքը քաղաքական հաղորդակցման մասին է, թեև ն՝ հաղորդագրություն ուղարկողը, ն՝ ստացողը, կամ, այլ կերպ ասած, «կառավարողներն» ու «կառավարվողները» կատարում են միևնույն գործողությունները հաղորդագրության վերձանման, մեկնաբանման ու կողավորման տեսքով (այդ առումով համաչափությունն իսկապես առկա է), այնուամենայնիվ շատ դեպքերում առկա է հակառակ պատկերը՝ քաղաքական հաղորդակցության սուբյեկտների անհավասարությունն ու տեղեկատվական-հաղորդակցական հոսքերի անհամաչափությունը¹⁸ :

Մ. Դոֆլերը նույնպես կարևորում է հետադարձ կապի սկզբունքը, որը թույլ է տալիս նվազեցնել տեղեկատվական աղմուկի հետևանքով առաջացած շեղումներն ու հետադարձ կապի հանգույցի շնորհիվ վերականգնել նախնական ու վերձանված հաղորդագրությունների բովանդակային համապատասխանությունը¹⁹: Այսպես օրինակ՝ հաղորդագրությո-

¹⁶ Տե՛ս **Schramm W.** How Communication Works. // Process and Effects of Mass Communication. / Ed.: W. Schramm. – Urbana: University of Illinois Press, 1954.

¹⁷ Նույն տեղում, էջ 58:

¹⁸ Տե՛ս **Грачев М.** Политическая коммуникация: теоретические концепции, модели, векторы развития. М., 2004, էջ 123:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 123-124:

յուն ուղարկողը հաղորդագրության տեսքով ձևակերպում է որոշակի իմաստային նշանակություն, որն արդեն հաղորդիչում վերածվում է տեղեկատվության, հաղորդակցական խողովակներով հասնում է ընդունիչին, որտեղ վերծանվելով դառնում է հաղորդագրություն և հասցեատիրոջ համար ձեռք բերում իմաստային որոշակի նշանակություն: Շատ հնարավոր է, որ հաղորդակցական նման գործընթացում ուղարկված ու տեղ հասած, վերծանված հաղորդագրությունների իմաստային նշանակությունները չհամընկնեն: Մինչդեռ հետադարձ կապի խողովակների առկայության դեպքում հնարավորություն է ստեղծվում ապահովելու հաղորդակցության հակադարձ շրջապատույտ բովանդակային վերջնական համապատասխանության հասնելու համար: Սակայն այս դեպքում իրավամբ հարց է ծագում՝ արդյո՞ք նման մեխանիզմով գործող հետադարձ կապի սկզբունքը կարող է հաղորդակցության սուբյեկտների միջև ապահովել երկխոսության փոխհարաբերությունների հաստատում, թե՞ սա ավելի շատ նման է հաղորդակցության նույն գծային, մեխանիստական ընկալմանը: Չէ՞ որ, ինչպես Մ. Կաստելյան է դիպուկ բնորոշում, հնարավոր է նաև հետադարձ կապի համակարգ ծուռ հայելիների միջև²⁰: Այս առումով դոֆլերյան «հետադարձ կապի հանգույցը» կարծես թե նույն գծային հաղորդակցման շարունակությունն է, մանավանդ որ հաղորդակցության սուբյեկտների իրականացրած գործառույթների տեսանկյունից դրանք հստակ տարանջատվում են. հաղորդագրություն ուղարկողը ձևակերպում է «իմաստային նշանակությունը», իսկ ստացողը՝ վերծանում այն:

Հետևաբար, եթե գծային կամ մենախոսային հաղորդակցության մոդելներում բացակայում է հետադարձ կապի մեխանիզմը, կամ գործում է վերոնշյալ իմաստով, դա դեռ չի նշանակում, որ դրա առկայության պարագայում մենք գործ ունենք երկխոսության հաղորդակցության հարացույցի հետ: Բանն այն է, որ երկխոսության հաղորդակցության համակարգում հետադարձ կապի սկզբունքը ձեռք է բերում նոր որակ ու բովանդակություն, որի դրսևորման առանձնահատկությունները լավագույնս պարզաբանելու համար Վ. Պոցելյուսը, օրինակ, հետադարձ կապի սկզբունքը դիտարկում է նոր կատեգորիայի՝ անդրադարձ (ռեֆլեքսիվ) դերային փոխանակման համատեքստում, առանց որի հաղորդակցության սուբյեկտների միջև տեղեկատվական փոխանակությունը դառնում է ուղղակի մեքենայական²¹: Դեռ ավելին, ռուս հեղինակի կարծիքով, անդրադարձ կապն ընկած է մարդկային յուրաքանչյուր հաղորդակցության հիմքում, այն ուրիշի դերի մեջ մտնելու մարդու ընդունակությունն է²²: Քաղաքական հաղորդակցման տեսական տարբեր

²⁰ Տե՛ս **Кастельс М.** Информационная эпоха: экономика, общество и культура // www.gumer.info/bibliotek_Buks/Polit/kastel/index.php:

²¹ Տե՛ս **Поцелуев С.** Диалог и квазидиалог в коммуникативных теориях демократии. Ростов-на-Дону, 2010, էջ 29:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 35:

մոդելների միջև առկա հայեցակարգային ծայրահեղությունները հաշվի առնելով՝ նա քաղաքական հաղորդակցումը սահմանում է որպես իշխանական շահեր կրողների միջև իրականացվող խորհրդանշական (սիմվոլիկ) փոխանակման փորձ²³: Ընդ որում, այդ փորձը կարող է լինել ինչպես բացասական, այնպես էլ դրական. առաջին դեպքում հաղորդակցությունը կտրվում է (օրինակ՝ վերածվում է ֆիզիկական բռնության), երկրորդ դեպքում հաղորդակցության սուբյեկտների միջև ձևավորվում է փոխըմբռնում²⁴:

Ըստ այդմ, հարկ է նշել, որ խորհրդանշական փոխազդեցության (սիմվոլիկ ինտերակցիոնիզմ) հարացույցը ժամանակակից քաղաքական կոնֆլիկտաբանության, ինչու չէ, նաև քաղաքական երկխոսութաբանության մեթոդաբանական զինանոցում կարևոր տեղ է զբաղեցնում: Այս հարացույցի արմատները գալիս են սոցիալական փոխգործակցության տեսությունից, որի ձևավորման գործում մեծ դեր է ունեցել Ջ. Միդի²⁵ տեսական ժառանգությունը: Սոցիալական փոխգործակցության հիմնական առանձնահատկությունն այն է, որ սոցիալական վարքագծի ուսումնասիրման մեթոդաբանության մեջ հաշվի են առնվում ինչպես մարդկային փոխհարաբերությունների արտաքին դրսևորումները, այնպես էլ մարդու ներաշխարհը, որտեղ մեծ նշանակություն է տրվում լեզվական խորհրդանիշերին (սիմվոլիկային)²⁶: Խորհրդանշական փոխազդեցության ելակետային դրույթներից է այն, որ գիտակցված փոխազդեցության կամ երկխոսության ընթացքում մարդիկ մեկնաբանում են միմյանց գործողություններն ու դրանց արձագանքում են համարժեքորեն²⁷: Այս համատեքստում մարդկանց փոխազդեցությունները անընդհատ երկխոսություն են, որի ընթացքում մարդիկ դիտարկում ու իմաստավորում են մեկը մյուսի մտադրությունները և համապատասխան արձագանքում դրանց²⁸:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հետադարձ կապի սկզբունքը երկխոսության քաղաքական հաղորդակցմանն անցնելու անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Այն առնվազն պետք է գործի անդրադարձ դերային փոխանակման տիրույթում՝ ապահովելով ոչ միայն հաղորդակցության սուբյեկտների միջև հետադարձ կապ, այլև մեկը մյուսի դերում հանդես գալու և դիմացինի տեսանկյունից խնդիրներին մոտենալու գործառության կարողություն: Բանակցությունների տեսության մեջ հայտնի էմպատիայի երևույթը, ըստ էության, որոշակի իմաստով իրենից ներկայացնում է հենց անդրադարձ դերային փոխանակման օրինակ:

²³ Տե՛ս նույն տեղը:

²⁴ Տե՛ս նույն տեղը:

²⁵ Տե՛ս **Мид Дж.** Избранное: Сб. переводов // "Теория и история социологии". М., 2009:

²⁶ Տե՛ս **Козырев Г.** Политическая конфликтология. М., 2008, էջ 11:

²⁷ Տե՛ս նույն տեղը:

²⁸ Տե՛ս **Смелзер Н.** Социология. М., 1994 // www.rudocs.exdat.com/docs/index-160128:

Սոցիալական փոխազդեցության տեսության դիրքերից երկխոսությանին հաղորդակցության էութենական բնութագրիչների բացահայտման գործում մեծ ավանդ ունի գերմանացի գիտնական Յու. Հաբերմասը, որի «հաղորդակցական գործողություն» հայեցակարգը իրավամբ կարելի է համարել երկխոսությանին քաղաքական հաղորդակցման վառ օրինակ:

Այդպիսի հետևության կարելի է հանգել՝ ըստ բուն հաղորդակցական գործողության հարերմասյան սահմանման. «Հաղորդակցական գործողությունը խոսելու և գործելու ունակ առնվազն երկու սուբյեկտների փոխազդեցություն է, որոնք վերբալ և ոչ վերբալ միջոցներով միմյանց հետ միջանձնային հարաբերություններ են հաստատում»²⁹: Ընդ որում, հաղորդակցության սուբյեկտներն առաջնորդվում են գործողության իրավիճակի, դրա վերաբերյալ իրենց մտադրությունների փոխհամաձայնեցված համակարգման ու փոխըմբռնման նպատակադրությամբ³⁰: Ակնհայտ է, որ հաղորդակցական գործողության նման ընկալման պարագայում բացահայտվում է երկխոսությանին հաղորդակցման հաջորդ էական հատկանիշը՝ փոխըմբռնման գործոնը:

Փոխըմբռնումը ոչ միայն երկխոսությանին քաղաքական հաղորդակցման կարևոր բնութագրիչներից է, այլ նաև երկխոսության վերջնանպատակներից մեկը, քանի որ միայն այդ դեպքում հաղորդակցական գործընթացի մասնակիցներից կարելի է ակնկալել երկխոսության գործընթացի տրամաբանությունից բխող հաջորդ քայլը՝ հիմնահարցերի համատեղ քննարկման ու լուծման պատրաստակամությունը: Քաղաքական հաղորդակցման արդի ոլորտներից փոխըմբռնման գործոնը հատկապես կարևորվում է PR և GR կապերի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այս ուղղությամբ հետազոտությունները մեծ թափ ստացան հատկապես XX դարավերջին ու XXI դարի առաջին տասնամյակում՝ հումանիտար գիտելիքի ձեռքբերման բնագավառում խորհրդանշելով յուրօրինակ «երկխոսությանին շրջադարձ»: Պետության ու հասարակայնության հետ կապերի երկխոսությանին տեխնոլոգիաների մշակման գործում իրենց ուրույն ավանդն ունեն այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են Ռ. Պիրսոնը³¹, Ջ. Գրյունիգն ու Թ. Հանթը³², Կ.Բոցանը³³, Ռ. Բուրկարտը³⁴, Մ. Քենթն ու Մ. Թեյլորը³⁵ և այլք:

²⁹ **Хабермас Ю.** Отношения к миру и рациональные аспекты действия в четырех социологических понятиях действия // "Социологическое обозрение". Т. 7. 2008, № 1, с. 11.

³⁰ Տե՛ս նույն տեղը:

³¹ Տե՛ս **Pearson R.** Beyond Ethical Relativism in Public Relations: Coorientation, Rules, and the Idea of Communication Symmetry // Journal of Public Relations Research. 1989, vol. 1:

³² Տե՛ս **Grunig J., Hunt T.** Managing Public Relations. N.Y., 1984:

³³ Տե՛ս **Botan C.** Ethics in Strategic Communication Campaigns: the Case for a New Approach to Communication with the Public// Journal of Business Communication. 1997/33:

³⁴ Տե՛ս **Зайцев А. Р.** Буркарт: PR диалог и консенсус-ориентированные связи с общественностью // "Общество: политика, экономика, право". 2013/4, էջ 28-31:

³⁵ Տե՛ս **Kent M., Taylor M.** Toward a dialogic theory of public relations // Public Relations Review, 2002, vol.28, № 1, էջ 21-37:

Այս հեղինակների մեծ մասը, առաջնորդվելով Հաբերմասի «հաղորդակցական գործողության» ու «դիսկուրսի էթիկայի» հարացույցների հիմքում ընկած գաղափարներով՝ տարածում և զարգացնում են դրանք արդեն PR և GR հաղորդակցության համատեքստում: Մասնավորապես, Ռ. Պիրսոնը հաբերմասյան դիսկուրսի էթիկայի հիմնատարերը տարածում է PR հաղորդակցությունների վրա՝ նշելով, որ հասարակայնության հետ կապերի էթիկան սերտորեն առնչվում է երկխոսության գաղափարի հետ: Այդ առումով նա առաջիններից էր, ով PR հաղորդակցության համատեքստում սկսեց ուսումնասիրել երկխոսությանին հաղորդակցման տեխնոլոգիաները՝ պնդելով, որ հասարակայնության հետ կապերի հիմքում ընկած են հաղորդակցության համակարգերի կառավարման տեխնոլոգիաները, որոնք, իրենց հերթին, պետք է բխեն «երկխոսությանին ստանդարտից», այսինքն՝ հենվեն երկխոսության գաղափարի վրա³⁶: Ընդհանրապես պետք է նշել, որ PR-ի և GR-ի ժամանակակից սահմանումներում նույնպես նկատվում է հաղորդակցության վերոնշյալ մոդելների ուղղակի կապը երկխոսության հիմնախնդրի հետ: Դեռ ավելին, PR-ն ու GR-ը սահմանվում են որպես կազմակերպություն-հասարակայնություն, կազմակերպություն-պետություն ձևաչափերում միմյանց նկատմամբ փոխադարձ վստահության ամրապնդման ու փոխշահավետ արդյունքներ հետապնդող մշտական երկխոսության գործընթաց³⁷:

PR հաղորդակցման երկխոսությանին տեխնոլոգիաների կատարելագործման ուղղությամբ մեծ ներդրում ունեն նաև ամերիկացի գիտնականներ Ջ. Գրյունիգն ու Թ. Հանթը, ովքեր առաջ են քաշում հասարակայնության հետ կապերի երկկողմանի համաչափ երկխոսությանին մոդելը³⁸: Ջ. Գրյունիգը, դրանից բացի, առանձնացնում է նաև հասարակայնության հետ կապերի աճպարարական (մանիպուլյատիվ), տեղեկատվական ու երկկողմանի անհամաչափ երկխոսությանին մոդելները: Սրանց մանրամասն նկարագրությունը տրված է 2002թ. «Գերազանց PR ու արդյունավետ կազմակերպություններ» համահեղինակությամբ տպագրված աշխատությունում³⁹: Նշենք միայն, որ PR հաղորդակցման մանիպուլյատիվ, տեղեկատվական ու երկկողմանի անհամաչափ երկխոսությանին ձևերը լիովին տեղավորվում են գծային-մենախոսային հաղորդակցման մոդելների գործառության տրամաբանության մեջ: Նույնիսկ երկկողմանի անհամաչափ երկխոսությանին մոդելում, որն առանձ-

³⁶ Ավելի մանրամասն տե՛ս **Pearson R.** Beyond Ethical Relativism in Public Relations: Coorientation, Rules, and the Idea of Communication Symmetry // *Journal of Public Relations Research*. 1989, vol. 1, № 1, էջ 67-86:

³⁷ Տե՛ս «GR связи с государством: теория, практика и механизмы взаимодействия бизнеса и гражданского общества с государством». М., 2012, էջ 49:

³⁸ Տե՛ս **Grunig J., Hunt T.**, նշվ. աշխ.:

³⁹ Տե՛ս **Grunig L., Grunig J., Dozier D.** Excellent Public Relations and Effective Organizations. Mahwah, 2002:

նացնում է Ջ. Գրյունիգը, մեր կարծիքով, «երկխոսության» բառը կարելի է խիստ հարաբերականորեն օգտագործել, քանի որ, այնուամենայնիվ, հաղորդակցության նման գործընթացը դիտարկվում է սուբյեկտ-օբյեկտ փոխհարաբերությունների հարթությունում: Վերոնշյալ հիմնահարցն ուսումնասիրող ռուս հետազոտողներից Ա. Ջայցը, դիտարկելով Ջ. Գրյունիգի առաջ քաշած մոդելը, նշում է, որ երկկողմանի անհամաչափ երկխոսության մոդելն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս պարզել, թե որ տեղեկատվությունն է դրական արձագանք գտնում հասարակայնության կողմից: «Հենց այդ առումով հաղորդակցական պրակտիկան դառնում է երկկողմանի, հետադարձ կապի մեխանիզմի առկայությամբ, այսինքն՝ երկխոսության»⁴⁰, - եզրակացնում է հեղինակը: Ստացվում է, որ հաղորդակցության երկխոսության բնույթը բխեցվում է հետադարձ կապի սկզբունքից, մինչդեռ նախորդիվ, քննության առնելով հետադարձ կապի հանգույցի գործառնությունը, մենք պարզեցինք, որ այն կարող է դրսևորվել նաև գծային, մեխանիստական հաղորդակցման համակարգում, ինչը դեռևս չի խոսում փոխհարաբերությունների երկխոսության բնույթի մասին: Իհարկե, պետք է ընդունել, որ այս մոդելում հասցեատերը տեղեկատվության միայն սպառող չէ, այլ օժտված է արձագանքելու որոշ հնարավորություններով: Սակայն, ինչպես նշում է Դ. Հավրան, երկկողմանի անհամաչափ հաղորդակցման նպատակը լսարանի կառավարումն է, ու այդ իմաստով այն կրում է սուբյեկտ-օբյեկտային բնույթ: Մի կողմից տեղեկատվություն ստացողը լրիվ պասիվ չէ ու ձեռք է բերում, թեկուզ և սահմանափակ, սուբյեկտի բնորոշ հատկանիշներ, սակայն, մյուս կողմից՝ նրան դժվար է համարել դիսկուրսի լիարժեք դերակատար, ու նա շարունակում է մնալ որպես օբյեկտ՝ ազդեցության որոշակի հնարավորություններով⁴¹:

Իսկ ահա Ջ. Գրյունիգի առաջարկած հաղորդակցական չորրորդ մոդելը լիովին տեղավորվում է դասական երկխոսության հաղորդակցության տրամաբանության մեջ: Ըստ ամերիկյան հեղինակի համաչափ երկխոսության հաղորդակցությունը պատկանում է փոխազդեցության այն տարատեսակին, որի դեպքում հաղորդակցության մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես է գալիս լիիրավ սուբյեկտի դերում՝ հաջորդաբար իրականացնելով տեղեկատվության աղբյուրի ու ստացողի դերերը⁴²: Նման համաչափ տեղեկատվական փոխանակումը լիովին համապատասխանում է իսկական երկխոսության իրական բնույթին, որը, Ջ. Գրյունիգի կարծիքով, ձևավորվել է կորպորատիվ Ամերիկայում դեռևս 1970-ական թվականներին: Փաստորեն, հասարակայնության հետ կապերի համաչափ մոդելը երկխոսության, քննար-

⁴⁰ **Зайцев А.** Диалогическая модель связей с общественностью: возникновение, состояние, перспективы // "Теория политики, экономики и управления". М., 2013, с. 8.
⁴¹ **St' u Гавра Д.** Основы теории коммуникации. СПб., 2011, էջ 283:
⁴² **St' u Grunig L., Grunig J., Dozier D.**, նշվ. աշխ., էջ 48:

կումների ու դիսկուրսի բաց հարթակ է, որը հնարավոր է հիմնականում բաց համակարգերում: Այս կարծիքին են մասնավորապես հանգել PR ոլորտի այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են Ս. Կատլիպը, Ա. Սենտերը և Գ. Բրումը⁴³: Իսկ «փակ համակարգերը» (այդ թվում և իշխանական) գերազանցապես օգտագործում են հաղորդակցության միակողմանի մոդելները և հիմնական ջանքերն ուղղում են հասարակական գիտակցության փոփոխությանը միտված քարոզչության իրականացմանը, միաժամանակ պահպանելով սեփական ավտարկիան, ռիզիկայնությունն ու չարձագանքելով շրջակա սոցիալական միջավայրի փոփոխություններին⁴⁴: PR գործունեության նման մոդելը քննադատում էր մասնավորապես Ջ. Գրյունիգը՝ «փակ համակարգերում» գործող միակողմանի հաղորդակցությանը նախապատվություն տվող PR մասնագետներին անվանելով «արհեստավորներ», իսկ համաչափ երկխոսությանին հաղորդակցության մոդելը կիրառողներին՝ հասարակայնության հետ կապերի իրական արհեստավարժներ⁴⁵: PR ոլորտի ամերիկյան մեկ այլ հայտնի մասնագետ Կ. Բոցանը նույնպես կարծում է, որ հասարակայնության հետ կապերի ավանդական մոտեցումները հանրությանը հատկացնում են երկրորդական դերակատարում, այն դեպքում, երբ երկխոսությանին հաղորդակցության մոդելների դեպքում հանրությունը «բարձրացվում է» կազմակերպության հետ հաղորդակցության իրավահավասար մակարդակի⁴⁶: Կ. Բոցանը նույնպես հասարակայնության հետ կապերի երկխոսությանին հաղորդակցման կողմնակից շատ մասնագետների նման PR հաղորդակցությունը դիտում է ոչ թե որպես մանիպուլյատիվ տեխնոլոգիաների ամբողջություն, որն ուղղված է հանրային կարծիքի վրա քարոզչական ազդեցության ուժեղացմանը, այլ որպես կազմակերպության ու հասարակության միջև երկկողմ համաչափ արդյունավետ հաղորդակցություն իրականացնելու գործընթաց⁴⁷: Այդ մոտեցումները նա զարգացնում է իր համաստեղ-ձագործության (co-creational), կամ, ինչպես Ա. Ջայցնն է դիպուկ բնորոշում՝ ստեղծագործական փոխազդեցության⁴⁸ տեսության շրջանակներում: Կ. Բոցանի տեսությունը մեծ տարածում ունի հատկապես մարքեթինգային հաղորդակցության ոլորտում, որտեղ co-creation-ը առաջատար ռազմավարություններից մեկն է: Այս դեպքում շուկան դիտվում է որպես գլոբալ մեծ ֆորում, որտեղ հանդիպում են արտադրողները, ծառայություններ մատուցողներն ու սպառողները: Ընդ որում,

⁴³ Տե՛ս **Катлип С., Сентер А., Брум Г.** Паблик релейшнз. Теория и практика. М., 2001, էջ 627:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը:

⁴⁵ Տե՛ս **Grunig J., Dozier D.**, նշվ. աշխ., էջ 51:

⁴⁶ Տե՛ս **Botan C.** Ethics in Strategic Communication Campaigns: the Case for a New Approach to Communication with the Public// Journal of Business Communication. 1997/33, էջ 196:

⁴⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 200:

⁴⁸ Տե՛ս **Зайцев А.**, նշվ. աշխ., էջ 12:

սպառողներն արդեն ոչ թե ապրանքների ու ծառայությունների սուկ կրավորական սպառողներ են, այլ ակտիվորեն մասնակցում են այդ նույն ծառայությունների ու ապրանքների ստեղծման գործընթացին, այսինքն՝ համաստեղծագործում են: Քաղաքական PR հաղորդակցության համատեքստում co-creational տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են քաղաքական տարբեր կուսակցությունների կողմից իրենց ծրագրերն ու նախընտրական պլատֆորմները կազմելիս՝ հանրության լայն շերտերին մասնակից դարձնելով այդ գործընթացին:

Երկխոսության PR հաղորդակցման արդյունավետ պլանավորման ու կազմակերպման համատեքստում առանձնահատուկ տեխնոլոգիա է առաջ քաշում ավստրիացի գիտնական Ռ. Բուրկարտը, իր՝ համաձայնությանն ուղղված հասարակայնության հետ կապերի (Consensus Oriented Public Relations (COPR)) մոդելով⁴⁹: Այն հիմնականում կառուցված է Հաբերմասի հաղորդակցական գործողության տեսության վրա և նպատակ է հետապնդում համակարգելու, տարբերակելու ու վերլուծելու հասարակական համապատասխան պրակտիկաներում առկա հաղորդակցական պահանջները: Ռ. Բուրկարտն իրավացիորեն առաջ է քաշում այն թեզը, որ հանրային կառավարման ոլորտը միշտ գտնվում է քննադատության թիրախում: Հասարակայնության տարբեր խմբեր ու ներկայացուցիչներ միշտ կասկածամտորեն են վերաբերվում իշխանության կողմից տրված տեղեկատվության իսկությունը, հատկապես երբ այն վերաբերում է վիճահարույց հարցերին ու քաղաքական տարբեր գործընթացների այլընտրանքային մեկնաբանություններին: Այդ առումով COPR-ի հայեցակարգը դառնում է կոնֆլիկտի մեծ հավանականությամբ իրավիճակներում հասարակայնության հետ կապերի պլանավորում ու գնահատում, երբ կազմակերպությունը անհրաժեշտություն է զգում հանրությանը ներկայացնել սեփական շահերի ու գաղափարների տարածման օգտին խոսող համոզիչ փաստարկներ⁵⁰: Այս պարագայում առաջին պլան են մղվում բաց, անկեղծ ու հավասարի սկզբունքով հաղորդակցական շփման ունակությունները, սեփական սխալների ընդունումն ու դրանք ուղղելու վճռականությունը, կազմակերպության ու հասարակայնության միջև գործընկերային երկխոսության շնորհիվ փոխըմբռնման ու վստահության մթնոլորտի ձևավորումը: Անձամբ Ռ. Բուրկարտը կարծում է, որ COPR մեթոդոլոգիան չի կարող կանխարգելել հակամարտությունները, բայց մեծ ներուժ ունի հասարակության վստահությունը կազմակերպության նկատմամբ բարձրացնելու ճանապարհով դրանց հաճախականությունը նվազեցնելու ու փոխակերպելու գործում: Սրանից կարելի է հետևություն անել, որ COPR ռազմավարություն-

⁴⁹ Տե՛ս **Зайцев А.** Консенсус-ориентированные связи с общественностью и теория диалога // "Политика, государство и право" // <http://politika.snauka.ru/2013/07/886>:

⁵⁰ Տե՛ս նույն տեղը:

նը հիմնականում գործի է դրվում կոնֆլիկտի ակտիվ փուլից հետո, երբ հակասություններն ու շահերի բախումն ակնհայտ են, ու հակամարտող կողմերն արդեն անցել են կոնկրետ գործողությունների: Այդ իսկ պատճառով Ռ. Բուրկարտը խնդիր է դնում հաղորդակցական այդ մոդելի միջոցով ուղղակի նվազեցնել կամ փոխակերպել հակամարտության ընթացքը: Ինչ խոսք, ընդունված տեսակետ է, որ կոնֆլիկտները մարդկային կենսագործունեության անքակտելի մասն են, որ անկոնֆլիկտ հասարակություններ չեն լինում: Մակայն դա չի նշանակում, որ չպետք է լուրջ ուշադրություն դարձնել կոնֆլիկտների կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը: Մասնավորապես, կոնֆլիկտի երևան գալու կանխարգելիչ ներուժ կարող է ունենալ հենց երկխոսության հաղորդակցության ռազմավարությունների համատարած կիրառումը հասարակական-քաղաքական դիսկուրս պրակտիկաների համատեքստում, այդ թվում և հասարակայնության հետ կապերի ոլորտում: Ուստի Ռ. Բուրկարտի COPR-ի մոդելի, ինչպես նաև կոնֆլիկտների կանխարգելմանն ուղղված PR գործողությունների արդյունավետության բարձրացման նպատակով կարելի է առաջարկել հասարակայնության հետ կապերի երկխոսության կողմնորոշում ունեցող մոդելը (Dialogue Oriented Public Relations (DOPR)): Այս մոդելի հիմնական առանձնահատկությունը, մեր կարծիքով, այն է, որ նախևառաջ կարող է կիրառվել ոչ միայն կամ ոչ այնքան կոնֆլիկտների կարգավորման, որքան կանխարգելման նպատակով, և երկրորդ՝ DOPR-ի կանխարգելիչ արդյունավետությունը կարող է դրսևորվել որպես հասարակայնության հետ կապերի երկարաժամկետ ռազմավարություն՝ նպաստելով հասարակության մեջ երկխոսության պրակտիկաների ու քաղաքական երկխոսության մշակույթի ամրապնդմանը: Իհարկե, վերջնական համաձայնություններին միտված հասարակայնության հետ կապերի (COPR) ռազմավարություններն իդեալական են կոնֆլիկտների խաղաղ կարգավորման, կազմակերպության ու հասարակայնության միջև փոխադարձ վտահոտության ամրապնդման առումով, սակայն միշտ չէ, որ հասնում են իրենց վերջնական նպատակին: Իսկ ահա հասարակայնության հետ երկխոսության կողմնորոշում ունեցող կապերը (DOPR) ավելի շատ միտված են հասարակական-քաղաքական հնչեղություն ունեցող հարցերն ու հիմնախնդիրները անընդհատ, մշտապես գործող երկխոսության ընթացակարգեր ներառելուն: Նույնիսկ եթե DOPR-ի մոդելը չի հանգեցնում վերջնական համաձայնության, միևնույնն է, այն հնարավորություն է տալիս լսելի դարձնել սոցիալ-քաղաքական բոլոր շահագրգիռ խմբերի տեսակետները հասարակական-քաղաքական դիսկուրսի արդիական ու օրակարգային հարցերի վերաբերյալ: Այս տեսանկյունից DOPR-ը մշտապես պետք է տեղ գտնի քաղաքական իշխանության իրականացման հաղորդակցական ռազմավարությունների

շարքում, դառնա քաղաքական նորմ, ավանդույթ, և ոչ թե ծայրահեղ բացառություն:

Բանալի բառեր – երկխոսության հաղորդակցություն, գծային հաղորդակցություն, ոչ գծային հաղորդակցություն, երկխոսության կողմնորոշում ունեցող հասարակայնության հետ կապեր

ХАЧИК ГАЛСТЯН – Особенности диалоговой политической коммуникации. – В статье рассматриваются основные модели политических коммуникаций, выявляются характерные черты и функциональные особенности применения диалоговых форм коммуникации в политическом пространстве современного общества. Выделяются основные принципы диалоговых взаимоотношений в коммуникационном поле и предлагается своеобразная модель политической PR-коммуникации, ориентированная на диалог (DOPR), как наиболее эффективный механизм предотвращения политических конфликтов и налаживания долгосрочных PR-коммуникаций в современной политической системе.

Ключевые слова: диалоговая коммуникация, линейные коммуникации, нелинейные коммуникации, ориентированные на диалог PR-коммуникации

ԽԱՇԻԿ ԳԱԼՏՅԱՆ – The Peculiarities of the Dialogical Political Communication. – Within the framework of this article, the author examines the basic models of political communications, identifies the characteristics and functional features of the application of dialogue forms of communication in the political space of modern society. In particular, highlighting the basic principles of building dialogue relationships in the communication field, the author offers an original - a dialogue oriented model of political PR Communications (DOPR), as the most effective mechanism to prevent political conflicts and building long-term PR communications in the political system of modern society.

Key words: dialogue communication, linear communication, nonlinear communication, dialogue-oriented PR communications

**ԴԵՑՎԻԴ ԱԹԿԻՆՍՈՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎՈՒՄ (2005 թ.)**

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Արդի համաշխարհային քաղաքականության առանձնահատկություններից մեկն այն է, որ միջազգային քաղաքական գործընթացներում պետություններից բացի հանդես են գալիս նաև միջազգային կազմակերպությունները: Ուստի շատ կարևոր է հատկապես հարավկովկասյան քաղաքական գործընթացներում ներգրավված միջազգային կազմակերպություններում (ՄԱԿ, Եվրոպայի խորհուրդ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ) Ադրբեջանի գործունեության հետազոտությունը: Իլհամ Ալիևի իշխանության գալուց հետո այս կառույցներում ադրբեջանական դիվանագիտությունը առավել մեծ ակտիվություն է ցուցաբերում՝ դառնալով նոր նախաձեռնությունների հեղինակ և Արցախին առնչվող բանաձևեր ու որոշումներ կազմելու ակտիվ մասնակից:

Ինչպես գիտենք, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ միջազգային հանրության միջնորդությունն իրականացվում է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության շրջանակներում ստեղծված Մինսկի խմբի միջոցով, որն ընդգրկում է 11 պետություն: Միջնորդական առաքելությունը դրված է ԵԱՀԿ Մինսկի խմբի մշտական համանախագահ երեք երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի վրա: Բացի դրանցից՝ ոչ միայն դարաբաղյան հիմնախնդրի, այլև աշխարհում ներկայումս գոյություն ունեցող լարվածության օջախների մարման և հակամարտությունների կարգավորման գործում ավանդաբար մեծ է ՄԱԿ-ի և Եվրոպական մյուս կառույցների դերակատարությունը: Նկատի ունենալով միջազգային հեղինակավոր կազմակերպությունների առանցքային դերը միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման և հակամարտությունների կարգավորման գործում՝ Ադրբեջանը միշտ էլ մեծ ուշադրություն է դարձրել այդ ուղղությամբ աշխատանքներին: Բավական է հիշել 1993 թ. ռազմական գործողությունների ամենաեռուն շրջանում ընդունված Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822, 853, 874 և 884 բանաձևերը: Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ ողջ բանակցային գործընթացում, ընդունելով հանդերձ Մինսկի խմբի առանցքային նշանա-

կույթունը հիմնախնդրի կարգավորման գործում, Ադրբեջանի ղեկավարությունը միշտ էլ փորձել է կյանքի կոչել ՄԱԿ-ի ԱԽ վերոհիշյալ բանաձևերը, ընդ որում՝ շեշտը դրվել է բանաձևերի այն դրույթների վրա, որտեղ պահանջվում է հայկական զինված ուժերի դուրսբերումը նախկին ինքնավար մարզի սահմաններից: Այսինքն՝ Ադրբեջանը օգտագործում է բանաձևերի միայն այն դրույթները, որոնք Հայաստանը ներկայացնում են որպես ագրեսոր, իսկ Ադրբեջանը՝ որպես զոհ: Միաժամանակ ադրբեջանական քարոզչական մեքենան ամեն կերպ մոռացության է մատնում Անվտանգության խորհրդի բանաձևերի այն դրույթները, որոնք նախատեսում են տնտեսական, տրանսպորտային, էներգետիկ և այլ կապերի վերականգնում, գործարկում և այլն:

Ադրբեջանի ղեկավարությունը միշտ էլ ակտիվ քաղաքականություն է վարում միջազգային հարթակներում՝ նպատակ ունենալով այդտեղից շարունակաբար հնչեցնել մեղադրանքները «ագրեսոր» Հայաստանի հասցեին և հասնել Ադրբեջանին ցանկալի ուղղությամբ միջազգային հանրության գործունեության ակտիվացմանը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Այս քաղաքական գիծը իրականացվում է նաև Եվրոպայի խորհրդում, որտեղ 2005 թ. ԵՄԽՎ-ում Դեյվիդ Աթլինսոնի զեկույցի հիման վրա ընդունված բանաձևը համարվեց ադրբեջանական դիվանագիտության «ամենամեծ հաջողությունը»: Այն դեռ կարող է օգտագործվել ի վնաս հայկական կողմի, ուստի կարևոր է զեկույցի քննարկման արդյունքում ընդունված բանաձևի և հանձնարարականների հետազոտությունը:

Հայաստանն ու Ադրբեջանը Եվրոպայի խորհրդին անդամակցեցին միաժամանակ: Ի թիվս ներքին քաղաքականության ոլորտում ստանձնած բազմաթիվ պարտավորությունների՝ երկու պետությունները արտաքին քաղաքականության բնագավառում ստանձնեցին նաև չափազանց կարևոր պարտավորություն, այն է՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը պետք է կարգավորվի բացառապես խաղաղ ճանապարհով¹: Միաժամանակ Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևի և առավել ևս նրա որդի Իլհամ Ալիևի իշխանության օրոք Ադրբեջանը հետևողական աշխատանք է տանում Եվրոպայի խորհրդի տարբեր մարմիններում Ղարաբաղյան հակամարտությունը և նրա առանձին ասպեկտներ արծարծելու, այդ հարցում եվրոպական այդ հեղինակավոր կառույցի քաղաքական բարենպաստ գնահատականի հասնելու գործում: Ադրբեջանի պետական բարձրաստիճան պաշտոնյաները,

¹ Առաջին անգամ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը Ղարաբաղյան խնդրին անդրադարձել է 1994 թ. նոյեմբերի 10-ին. «Վեհաժողովը հայտարարում է իր պատրաստակամությունը խթանելու խաղաղության պայմանագրի կնքումն իր հնարավորությունների առավելագույն սահմաններում՝ մասնավորապես խրախուսելով շահագրգիռ կողմերի խորհրդարանների միջև երկխոսությունը» (ԵՄԽՎ 1994 թ. թիվ 1047 բանաձևը):

այդ թվում նաև դիվանագետները, ԵՄԽՎ-ի ամբիոնից հանդես գալով, հատկապես շեշտը դնում են հակամարտության այնպիսի ասպեկտների վրա, ինչպիսիք են՝ Ադրբեջանի մի շարք շրջանների «օկուպացիան» և երկրում մեծ թվով փախստականների առկայությունը (ըստ պաշտոնական Բաքվի ուռճացրած տվյալների՝ մոտ մեկ միլիոն): Եվրոպայի խորհրդի հետ հարաբերություններում Ադրբեջանի հիմնական նպատակն է հասնել այն բանին, որ Հայաստանը ճանաչվի ագրեսոր, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես անջատողական ռեժիմ²: Ադրբեջանամետ ձևակերպումներ ձեռք բերելով հանդերձ՝ պաշտոնական Բաքուն միշտ էլ շեշտում է, որ հակամարտության կարգավորման գործում Եվրոպայի խորհրդի ազդեցության հնարավորությունները շատ չեն, քանի որ հակամարտության կարգավորմամբ պաշտոնապես զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը: Հետևաբար, հարց է առաջանում՝ ինչո՞վ էր պայմանավորված ադրբեջանական դիվանագիտության ակտիվությունը Եվրոպայի խորհրդում, եթե դրա գործնական նշանակությունը այդքան էլ մեծ չէ: Մեր կարծիքով, այս հարցին չի կարելի միանշանակ մոտենալ: Եվրոպայի խորհրդի կողմից Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի՝ Ադրբեջանի համար բարենպաստ գնահատական տալը կարող է բանակցային գործընթացում բարոյահոգեբանական հսկայական ազդեցություն ունենալ հակամարտության կողմերի վրա: Մինչ 2005 թ. միջազգային կազմակերպություններից միայն «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությունն էր, որ հատուկ բանաձևով Հայաստանը որակել էր որպես «ագրեսոր» և դատապարտել ադրբեջանական հողերի «գրավման» փաստը: Սակայն հասկանալի պատճառներով իսլամական աշխարհը միավորող այդ միջազգային կառույցի դիրքորոշումը չէր կարող քիչ թե շատ ազդել միջազգային հանրության մոտեցումների վրա: Մինչդեռ Եվրոպայի խորհրդի նմանատիպ բանաձևը կարող է լուրջ ազդակ հանդիսանալ հակամարտող կողմերի համար՝ դառնալով դարաբաղյան հիմնախնդրի հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքի և մոտեցումների յուրօրինակ ինդիկատոր:

Հայաստանի և Ադրբեջանի անդամակցությունից հետո ադրբեջանական դիվանագիտությունը հատկապես մեծ ակտիվություն է դրսևորում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում: Պետք է նշել, որ դեռևս 2002 թ. *Եվրոպայի խորհրդի խորհրդա-*

² Եվրոպայի խորհրդին Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության նախաշեմին ԵՄԽՎ-ն ընդունեց բանաձև Անդրկովկասում հակամարտությունների մասին, որտեղ Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ առաջին անգամ շրջանառության մեջ էր դրվում «օկուպացված տարածք» և «փախստականների ու տեղահանված անձանց վերադառնալու իրավունք» դրույթները: Ղարաբաղի համար բանաձևը նշում է ոչ թե անկախության, այլ այլընտրանքային կարգավիճակի, նպատակահարմարությունը, որը հասկացվում է որպես «լայն ինքնավարություն» (տե՛ս ԵՄԽՎ 1997 թ. թիվ 1119 բանաձևը):

րանական վեհաժողովի ամառային նստաշրջանի ժամանակ վեհաժողովի սոցիալիստական խմբակցության ղեկավար, Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի անդամ **Թերի Դևիսը** նշանակվել էր զեկուցող Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ:

2004 թ. մայիսի 25-ին տեղի ունեցավ ԵՄԽՎ քաղաքական հանձնաժողովի նիստը, որտեղ ելույթ ունեցավ Թ. Դևիսը: Նա նշեց, որ զեկուցող հանդես կգա վեհաժողովի հունիսյան նստաշրջանին: Դևիսի խոսքերով, «Հակամարտությունը, որով զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը» անունը կրող զեկույցը գրեթե պատրաստ էր, սակայն տարածաշրջանային վերջին այցելությունից հետո տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ, որոնք պահանջում են վերանայել զեկույցի որոշ դրույթներ³:

Թերի Դևիսը ավարտեց իր զեկույցը, սակայն չհասցրեց այն ներկայացնել վեհաժողովին, քանի որ նա ընտրվեց Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար: Սեպտեմբերի 14-ին Փարիզում ԵՄԽՎ քաղաքական հանձնաժողովի հերթական նիստի ժամանակ Դևիսը ներկայացրեց իր զեկույցը, որից հետո նշանակվեց նոր զեկուցող՝ վեհաժողովի դեմոկրատական խմբակցության ղեկավար և Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի անդամ **Ղեյվիդ Աթկինսոնը**: Չեկույցի վերջնական տեքստի նախապատրաստումը և ներկայացումը հետաձգվեց մինչև ԵՄԽՎ 2005 թ. հունվարյան նստաշրջան: Աթկինսոնը լուրջ փոփոխություններ չմտցրեց Դևիսի նախապատրաստած զեկույցի մեջ, չնայած որ հայկական պատվիրակությունը ամեն կերպ փորձեց հասնել ոչ բարենպաստ ձևակերպումների շտկմանը: Քննարկումների ժամանակ հայկական կողմից արվել էր փոփոխության հինգ առաջարկ, որոնցից երեքը մերժվել էր: Մերժվել էին առավել անբարենպաստ ձևակերպումներ ունեցող դրույթների փոփոխության մասին առաջարկները: 2004 թ. դեկտեմբերի 15-ին զեկույցը քննարկվեց ԵՄԽՎ բյուրոյի նիստում և Հայաստանի համար նույն անբարենպաստ ձևակերպումներով տեղափոխվեց վեհաժողովի պլենար նիստ: Այլևս անհնար էր կասեցնել զեկույցի քննարկումը կամ էլ մինչև քննարկումը հասնել որոշակի փոփոխությունների: Դրա իրավասությունը չունեին ո՛չ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսը, ո՛չ էլ ԵՄԽՎ նախագահ Փիթեր Շիդերը: Հայաստանին մնում էր ետվարագուրային անհատական աշխատանք տանել ինչպես առանձին պատգամավորների, այնպես էլ ԱԳՆ գործընկեր պետությունների հետ: Այժմ դժվար է ինչ-որ դրական կամ բացասական գնահատական տալ այդ աշխատանքների արդյունավետությանը, բայց ադրբեջանական կողմը լրջորոն անհանգստացած էր: Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Սամեդ Սաիդովը նշում էր, որ փաստաթղթի տեքստը լիովին բավարարում է

³ Տե՛ս <http://www.azatutyun.am/content/article/1574819.html>

իրենց, և պետք է ամեն ինչ անել փոփոխություններ թույլ չտալու համար⁴: Նրա հույսը նավթային դիվանագիտության լծակներն էին:

Երկար քննարկումներից հետո Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2005 թ. հունվարի 25-ին ընդունեց Դ. Աթլինստնի «Հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ, որով զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը» անունը կրող զեկույցը: Չեկույցը բաղկացած է երկու մասից՝ բանաձևից (15 կետ) և հանձնարարականից (10 կետ): Նկատի ունենալով զեկույցի կարևոր նշանակությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում, անհրաժեշտ եմ համարում հնարավորինս մանրամասն ներկայացնել այն:

Առաջին կետում նշվում է, որ հակամարտությունը մնում է չկարգավորված, հարյուրհազարավոր մարդիկ ապրում են խղճուկ պայմաններում: ԽՎ-ն նաև արձանագրում է այն փաստը, որ Ադրբեյջանի տարածքի զգալի մասը գտնվում է հայկական ուժերի օկուպացիայի տակ, իսկ անջատողական ուժերը դեռևս վերահսկողության տակ են պահում Լեռնային Ղարաբաղը: Երկրորդ կետում նշվում է, որ ռազմական գործողությունները և դրանց նախորդող էթնիկական թշնամանքը հանգեցրել են էթնիկական հատկանիշով լայնածավալ արտաքսումների ու մոնոէթնիկ տարածքների ստեղծմանը: Այսպիսի ձևակերպումը նմանվում է «էթնիկական գտում» սարսափելի հասկացությանը: **Երկրորդ** կետում ԽՎ-ն հաստատում է, որ տարածքի անջատումը պետության կազմից և նրա ինքնիշխանությունը կարող են ձեռք բերվել միայն օրինական և խաղաղ գործընթացով, հիմնված այդ տարածքի բնակչության ժողովրդավարական աջակցության վրա, այլ ոչ թե զինված հակամարտության ճանապարհով, որը հանգեցնում է էթնիկական արտաքսումների և այդ տարածքի դե ֆակտո բռնազավթմանը այլ պետության կողմից: ԽՎ-ն կրկնում է, որ որևէ պետության տարածքի բռնազավթումը ԵԽ անդամ պետության կողմից ԵԽ անդամի պարտավորությունների խախտում է, և վերահաստատում է հակամարտության գոտուց տեղահանված անձանց՝ իրենց բնակավայրեր վերադառնալու իրավունքը: **Երրորդ** կետում ԽՎ-ն կոչ է անում շահագրգիռ կողմերին ենթարկվել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822, 853, 874, 884 բանաձևերին, մասնավորապես ձեռնպահ մնալ զինված բախումներից և դուրս բերել զինված ուժերը գրավված տարածքներից: **Չորրորդ** կետը, հիշեցնելով հակամարտող կողմերին ԵԽ-ին անդամակցությամբ իրենց ստանձնած պարտավորությունը, հակամարտությունը կարգավորել բացառապես խաղաղ ճանապարհով, կոչ է պարունակում՝ ուղղված Հայաստանին և Ադրբեյջանին, ձեռնպահ մնալ զինված ուժի կիրառումից, ինչպես նաև ուժի կիրառման քարոզչությունից: **Հինգերորդ** կետով ԽՎ-ն կոչ է ա-

⁴ Տե՛ս <http://www.panarmenian.net/arm/details/42254/>

նում Մինսկի խմբի անդամ պետություններին ակտիվացնել իրենց ջանքերը հակամարտության կարգավորման ուղղությամբ, ինչպես նաև ԵԽԽՎ բյուրոյին առաջարկում է այդ երկրների ազգային պատվիրակությունների ղեկավարներից բաղկացած կոմիտե ստեղծել: **Վեցերորդ** կետում ԽՎ-ն ընդգծում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի կարևոր ներդրումը զինադադարի կնքման և պահպանման գործում՝ կոչ անելով հակամարտող կողմերին Մինսկի խմբի միջոցով միմյանց ներկայացնել կառուցողական առաջարկություններ հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: **Յոթերորդ** կետում ԽՎ-ն առաջարկում է Հայաստանին և Ադրբեջանին ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո բանակցությունների ձախողման պարագայում քննարկել ՄԱԿ-ի Միջազգային դատարանն օգտագործելու հնարավորությունը: **Ութերորդ** կետում ԽՎ-ն առաջարկում է հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով զարգացնել երկկողմանի միջխորհրդարանական համագործակցություն: **Իններորդ** կետում ԽՎ-ն կոչ է անում Ադրբեջանին առանց որևէ նախապայմանի շփումներ հաստատել Լեռնային Ղարաբաղի երկու համայնքների քաղաքական ներկայացուցիչների հետ՝ քննարկելով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Վերջին **15-րդ կետում** ԽՎ-ն նշում է, որ կշարունակի մոնիտորինգը հակամարտության կարգավորման ուղղությամբ և կրկին կանդադարեա՞նա այդ հարցին:

Նախագծի հանձնարարականների մասում Նախարարների կոմիտեին ուղղված Խորհրդարանական վեհաժողովի հիմնական հանձնարարականներն էին.

- համոզել շահագրգռված կողմերին ի կատար ածել ՄԱԿ-ի վերոհիշյալ չորս բանաձևերը, մասնավորապես՝ ձեռնպահ մնալ ռազմական գործողություններից և դուրս բերել զինված ուժերը Ադրբեջանի բոլոր գրավված տարածքներից,
- վերահսկել Հայաստանի և Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի բանաձևերի և ԵԱՀԿ նախարարների խորհրդի որոշումների կատարումը,
- զեկուցել ԽՎ-ին անդամ պետությունների կողմից ձեռնարկվող ջանքերի մասին ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերի հիման վրա հակամարտության կարգավորման ուղղությամբ՝ ներառյալ անդամ պետությունների ձեռնպահ մնալը զենքի և զինամթերքի մատակարարումներից,
- Հայաստանին և Ադրբեջանին տրամադրել փորձագետներ, որոնք կարող են օգնել որոշելու Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը,
- միջոցներ հատկացնել Հայաստանում և Ադրբեջանում վստահության վերականգնմանն ուղղված գործողությունների հատուկ ծրագրի համար,

• միջոցներ հատկացնել երկու երկրների ուսուցիչների և լրագրողների պատրաստման հատուկ ծրագրերի համար՝ փոխադարձ վստահության, հանդուրժողականության և հաշտեցման զարգացման ուղղությամբ⁵:

Ձեռնպահ մնալով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ընդունած բանաձևի վերաբերյալ կտրուկ և ծայրահեղական գնահատականներից՝ միաժամանակ պետք է ընդունել, որ բանաձևը շատ ավելի բարենպաստ դրույթներ է բովանդակում Ադրբեջանի, քան Հայաստանի համար: Մասնավորապես, բանաձևում տեղ են գտել այնպիսի վտանգավոր ձևակերպումներ, ինչպիսիք են՝ հայկական ուժերի կողմից Ադրբեջանի տարածքների գրավում, Լեռնային Ղարաբաղի անջատողական ուժեր, էթնիկական գոտումներ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի կատարման և բոլոր գրավված շրջաններից գորքերի դուրսբերման կոչ և այլն:

Արդարացի լինելու համար պետք է նշել, որ բանաձևում պարունակվում են նաև Ադրբեջանի համար ոչ ձեռնտու կետեր, ինչպիսիք են՝ առանց նախապայմանների Լեռնային Ղարաբաղի երկու համայնքների քաղաքական ներկայացուցիչների հետ Ադրբեջանի կողմից ուղղակի շփումներ հաստատելու անհրաժեշտությունը, ***ինչպես նաև պետության կազմից նրա տարածքի մի մասի դուրս գալու և անկախանալու գործընթացի ժողովրդավարական պաշտպանության անհրաժեշտությունը այդ տարածքի բնակչության կողմից:*** Վերջինս, ըստ էության, հող է նախապատրաստում Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու համար: Պետք է նշել, որ «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության ընդունած բանաձևերից հետո սա առաջին միջազգային փաստաթուղթն է, որն ընդունվել է քրիստոնյա երկրներից բաղկացած կազմակերպության կողմից, և որում կոշտ գնահատականներ են տրվում Հայաստանին և նրա վարած քաղաքականությանը՝ մեղադրելով ագրեսիայի մեջ: ԵՄԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանի խոսքերով՝ փաստաթուղթը մնաց իր վտանգավոր կետերով, և դա, իհարկե, կարող է ադրբեջանցիների կողմից օգտագործվել⁶: Ադրբեջանական պետական և քաղաքական գործիչներն այդ կապակցությամբ նշում էին, որ Եվրոպան վերջապես սկսում է հրաժարվել հակամարտող կողմերի հանդեպ հավասար դիրքորոշումից և քաղաքական գնահատական է տալիս հակամարտությանը: Միաժամանակ, ադրբեջանական էլիտայի կարծիքով, իր ամբողջ

⁵ ԵՄԽՎ թիվ 1416 բանաձևը և նրա հետ կապված թիվ 1690 հանձնառարանանո, տե՛ս Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի coe.am/index.php?cat_id=38&print=1 կայքում:

⁶ Տե՛ս <http://www.hra.am/hy/events/2005/01/25/14015>

դրական ներգործությամբ հանդերձ՝ բանաձևը Ադրբեջանի համար չի կարող էական ազդեցություն ունենալ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում, քանի որ ԵԱՀԿ Մինսկի խումբը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը դարձրել է իր մենաշնորհը, և բացի այդ՝ ԵՄԽՎ բանաձևը պարտադիր բնույթ չի կրում:

Հատկանշական էր նաև հենց զեկուցողի՝ Դեյվիդ Աթկինսոնի ելույթը խորհրդարանական վեհաժողովի նիստում: Նա մասնավորապես նշեց, որ կան հակամարտության կարգավորման երեք տարբերակներ. առաջին՝ ռազմականը, երբ Ադրբեջանը զենքի ուժով ազատագրում է իր տարածքները, բայց այդ դեպքում նա չի կարող մնալ Եվրոպայի խորհրդի անդամ, երկրորդ՝ պահպանվում է ստատուս քվոն, Լեռնային Ղարաբաղը մնում է անկախ, Հայաստանի պաշտպանության տակ՝ միաժամանակ դուրս մնալով Եվրոպայից և ողջ միջազգային հանրությունից, և երրորդը՝ հակամարտության կարգավորումը միջազգային կազմակերպությունների, այդ թվում նաև ԵՄ-ի մասնակցությամբ: Փաստորեն, Աթկինսոնը դրանով ընդգծում է հակամարտող կողմերի դիրքորոշումների ծայրահեղությունը՝ նշելով լավագույն տարբերակը, այն է՝ հակամարտության կարգավորումը միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ և միջնորդությամբ: Միաժամանակ, Աթկինսոնը մերժում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման և անկախ պետություն ստեղծելու իրավունքը շատ հետաքրքիր պատճառաբանությամբ: Նա նշում է, որ ինքնորոշման իրավունքը Լեռնային Ղարաբաղի դեպքում կիրառելի չէ, քանի որ պետության սահմանները փոփոխվում են միայն պետությունների փոխադարձ համաձայնությամբ: Եվ քանի որ Ադրբեջանի իշխանությունները երբեք չեն համաձայնի Լեռնային Ղարաբաղի անկախությանը, ուստի ինքնորոշման իրավունքը տվյալ դեպքում չի գործում:

Հայաստանում բավականին բուռն քննարկումներ եղան ԵՄԽՎ-ի բանաձևի շուրջ: Գնահատականները բավականին իրարամերձ էին: Եղան իշխանությունների և դիվանագիտական կորպուսի գործունեության սուր քննադատություններ: Հիշատակվեց նաև 1997 թ., երբ Լևոն Տեր-Պետրոսյանը առաջարկում էր չհետաձգել բանակցությունները, օգտագործել տարածքների գործոնը և հասնել ավելի մեծ արդյունքի⁷: Կար նաև իշխանության հակառակ տեսակետը, որ ԵՄԽՎ բանաձևը հիմնավորում է նաև Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը և ԼՂՀ-ի ու Ադրբեջանի միջև ուղղակի բանակցությունների նախադեպ է ստեղծում⁸: ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի կարծիքով Աթկինսոնի զեկույցն ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Բացասական

⁷ Տե՛ս **Տիգրան Պակնիչյան**, Ընդդեմ և հանուն պատերազմի, <http://hetq.am/arm/news/8827/ynddem-ev-hanun-paterazmi-nakhahimqeri.html>

⁸ Տե՛ս <http://www.aravot.am/2005/01/27/319731/>

այն է, որ զեկուցողը հիմնախնդրի հետևանքների մասին է խոսում և խորամուխ չի լինում հարցի մեջ, չի անդրադառնում հիմնախնդրի պատճառներին, իսկ դրականը վերաբերում է սեփական ճակատագիրը որոշելու ժողովուրդների իրավունքի ամրագրմանը և Ադրբեջանին ուղղված կոչը՝ հանդիպելու Ղարաբաղի ներկայացուցիչներին⁹: Երևանում ավելի շատ գերակշռում էր այն կարծիքը, որ Ղարաբաղի վերաբերյալ ԵՄԽՎ-ում ընդունված բանաձևը չի կարելի համարել ադրբեջանական դիվանագիտության ձեռքբերում¹⁰:

Այսպիսով, 2005 թ.-ին Աթլինստնի զեկույցի հիման վրա ընդունված ԵՄԽՎ բանաձևը և հանձնարարականները ինչ-որ առումով ամրապնդեցին Ադրբեջանի դիրքերը: Ադրբեջանն իր քարոզչական մեքենայի միջոցով կարողացավ միջազգային հանրության ուշադրությունը շեղել հակամարտության բուն էությունից՝ Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի հարցից՝ խնդիրը հանգեցնելով գրավված տարածքների ազատագրմանը և փախստականների վերադարձին: Օգտագործելով ԵՄԽՎ-ի ամբիոնը՝ Բաքուն կարողացավ իր համար ստեղծել ագրեսիայի գոհի տպավորություն եվրոպական կառույցներում և փորձեց ավելի ընկալելի դառնալ միջազգային հանրության համար: Մեկ ամիս էլ չէր անցել բանաձևի ընդունումից, երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում կազմավորվեց փաստահավաք խումբ, որն այցելեց ԼՂՀ վերահսկողության տակ գտնվող յոթ շրջաններ: Փաստահավաք խմբի կազմում, համանախագահներից բացի, ներգրավված էին եվրոպական մի շարք երկրների ներկայացուցիչներ, իսկ խումբը ղեկավարում էր գերմանացի դիվանագետ Էմիլի Հաբերը¹¹: Հետագայում ևս Դեյվիդ Աթլինստնի հեղինակած ԵՄԽՎ 1416 բանաձևը բազմիցս օգտագործվեց թուրքական և ադրբեջանական դիվանագիտության կողմից: Երբ ԵՄԽՎ նախագահ ընտրվեց թուրք Մելուք Չավուշօղլուն, 2010 թ. փորձեր արվեցին ստեղծել ԼՂ հարցով ենթահանձնաժողով՝ հիմնավորելով այն այդ չարաբաստիկ բանաձևով¹²: Աթլինստնի զեկույցից բխող բանաձևի վտանգավորության մեկ այլ ապացույց դարձավ ԵՄ բարձրագույն օրենսդիր մարմնում՝ Եվրախորհրդարանում, բուլղարացի պատգամավոր Եվգենի Կիրիլովի զեկույցը, որի հիման վրա ընդունվեց թիվ 2216 բանաձևը: Այն պահանջում էր հայկական բոլոր զորքերի դուրսբերում (8-րդ կետ) և նշում էր Թուրքիայի դերակատարության կարևորությունը տարածաշրջանային հակամարտություններում (39-րդ

⁹ Տե՛ս **Արմեն Հակոբյան**, Պրահայի գործընթացը շարունակվելու է, <http://www.armworld.am/detail.php?paperid=103&pageid=3631&lang=>

¹⁰ Տե՛ս **Արտյոմ Երկանյան**, Աթլինստնի զեկույցը չի փրկի ադրբեջանցիներին, <http://www.panarmenian.net/arm/politics/details/42256/>

¹¹ Տե՛ս **Գառնիկ Գևորգյան**, Հերթական զեկույցին սպասելիս, <http://archive.168.am/am/articles/874>

¹² Տե՛ս **Արման Գալոյան**, Ինչո՞ւ է ուզում վերակենդանացնել 1416 բանաձևը, <http://www.zhamanak.com/article/15212/>

սարքերություն)¹³: Մեկ ապացույց ևս, որ ԵՄԽՎ 1416 բանաձից բխող վտանգները դեռ չեն վերացել, այն կարող է օգտագործել Թուրքիան ԼՂ հակամարտության կարգավորման մեջ խցկվելու համար, և այդ բանաձևի բացառումը քաղաքական օրակարգից մնում է մեր դիվանագիտության կարևոր խնդիրներից մեկը:

Բանալի բառեր - *ԵՄԽՎ, Լեռնային Ղարաբաղ, ինքնորոշում, բանաձև, հակամարտություն, դիվանագիտություն, Ադրբեջան, Հայաստան*

ГАРИК КЕРЯН – Доклад Дэвида Аткинсона в Парламентской ассамблее Совета Европы (2005). – В 2002–2005 гг. комиссия по политическим вопросам Парламентской ассамблеи Совета Европы обсуждала нагорно-карабахский конфликт. Первоначально докладчиком по этому вопросу был назначен член социалистической фракции Терри Дэвис, затем им стал Дэвид Аткинсон, представлявший демократическую фракцию. После длительных обсуждений 25 января 2005 г. на основе доклада, сделанного Д. Аткинсоном, ПАСЕ приняла резолюцию № 1416. Хотя этот документ и включал некоторые пункты, благоприятные для Азербайджана, в нём зафиксировано, что определённая территория имеет право на отделение от государства демократическим путём.

Ключевые слова: *ПАСЕ, Нагорный Карабах, самоопределение, резолюция, конфликт, дипломатия, Азербайджан, Армения*

GARIK KERYAN – David Atkinson's Report at the Parliamentary Assembly of the Council of Europe (2005). – 2002-2005, Committee for Political Affairs of the Parliamentary Assembly of the Council of Europe was discussing Nagorno-Karabakh conflict. Initially, the reporter on this issue has been appointed a member of the socialist faction Terry Davis, then a member of the Democratic faction David Atkinson. January 25, 2005, after lengthy discussions PACE, adopted a resolution on Nagorno-Karabakh conflict, based on Atkinson's report /resolution No. 1416 /. Despite the fact, that this document includes some favorable points for Azerbaijan, it evidences the importance of protecting the separation of a particular territory from the State by democratic methods.

Keywords: *PACE, Nagorno-Karabakh, determination, resolution, conflict, diplomacy, Azerbaijan, Armenia*

¹³ Տե՛ս **Քրիստինե Խանումյան**, Աթլինսոնից Կիրիլով. և այսպես դեպի ազրեւո-րացում, <http://www.zhamanak.com/article/15210/>

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԶԼՄ- ՆԵՐՈՒՄ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱՐԳԻՆԱ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ-ում ժողովրդավարացման գործընթացները սկիզբ են առնում 1991 թ. անկախությունից հետո, երբ նորանկախ Հայաստանի իշխանությունները հայտարարեցին ժողովրդավարական արժեքների առաջնայնության մասին:

Հարկ է նկատել, որ «ժողովրդավարություն» տերմինի բուն իմաստն ու բովանդակությունը տարբեր երկրներում տարբեր կերպ են ընկալվում: Ինչպես գրում է սոցիոլոգ Գ.Պողոսյանը, «ըստ ժողովրդավարության էության ընկալման և իրենց մոտեցումների՝ ԽՍՀՄ փլուզումից հետո բոլոր երկրները բաժանվեցին երկու խմբի՝ արևմտյան և նախկին խորհրդային երկրներ»¹: Բանն այն է, որ Արևմուտքի մարդու համար ժողովրդավարությունը նախ և առաջ նշանակում է քաղաքացիների մասնակցություն կարևոր որոշումների ընդունմանը տարբեր մակարդակներում՝ գյուղական, համայնքային, դաշնային, ազգային: Նախկին խորհրդային քաղաքացիների համար ժողովրդավարությունը նախ և առաջ նշանակում է զանազան ազատություններ՝ խոսքի, մամուլի, կրոնի, խղճի, տեղաշարժվելու և այլն: Այլ կերպ ասած՝ խորհրդանշում է քաղաքացիական այն ազատությունների շարքը, որը խորհրդային իշխանության տարիներին արգելանքի տակ էր:

Եթե եվրոպացին մտածում է մասնակցային ժողովրդավարության կատեգորիաներով, ապա հետխորհրդային քաղաքացիներն առաջմ բավարարված են ընձեռված ազատություններով, իսկ նրանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին և պետության կառավարմանը, որպես կանոն, սոսկ դրսևորվում է ընտրությունների ժամանակ որոշ ակտիվությամբ: Ընտրությունների միջև ընկած շրջանում քաղաքացիների մասնակցությունը քաղաքական գործընթացներին հասնում է նվազագույնի, իսկ երբեմն ընդհանրապես ի չիք են դառնում մասնակցության իրական և գործուն ձևերը: Հետխորհրդային քաղաքացիների համար ընտրությունները փաստորեն միակ հնարավորությունն են ներկայացուցչական մարմինների ձևավորման վրա ազդելու միջոցով մասնակցելու պետության կառավարմանը:

ԽՍՀՄ փլուզումից և ՀՀ անկախացումից հետո մեր պետությունը կանգնեց տարաբնույթ հիմնախնդիրների առջև, որոնք մի կողմից պայ-

¹ Գ. Պողոսյան, Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Եր., 2007, էջ 152:

մանավորված էին անցումային շրջանի օբյեկտիվ դժվարություններով, իսկ մյուս կողմից՝ սուբյեկտիվ գործոններով: Տնտեսական, իրավական, քաղաքական, սոցիալական բազմաթիվ հիմնախնդիրների կողքին ՀՀ-ում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ՋԼՄ-ների ազատության և արդյունավետ գործունեության խնդիրը՝ մեր պետության մեջ ընթացող քաղաքական զարգացումների ըմբռնման, առկա հիմնախնդիրների վերհանման և հաղթահարման տեսանկյունից: ՀՀ-ում ՋԼՄ-ների, խոսքի ազատության հիմնախնդիրները համակարգային են, դրանք չի կարելի դիտարկել սոսկ իրավական, տնտեսական, քաղաքական և այլ իրողությունների համատեքստում:

Շուրջ երկու տասնամյակ այնպիսի տեսակետ է ձևավորվել, թե հայաստանյան ՋԼՄ-ները ազատ և անկախ չեն, անկատար է օրենսդրական դաշտը, քաղաքական համապատասխան վարչակարգը խոչընդոտում է ՋԼՄ-ների՝ ժողովրդավարության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելուն: Իհարկե, ՀՀ-ում այսօր էլ ՋԼՄ-ները լրջագույն խնդիրներ ունեն, սակայն նկատենք, որ դրանց պատճառները քննելիս ի հայտ է գալիս որոշ միակողմանիություն:

ՋԼՄ-ների ազատության և արդյունավետ գործունեության առումով անշուշտ կարևոր են իրավական և քաղաքական բազմաթիվ գործոններ, որոնք թեպետ փոխկապակցված են, այնուամենայնիվ գնահատականներ տալու նպատակով դրանք կարելի է դիտարկել մեկը մյուսից անջատ: Այս տեսանկյունից հարցին մոտենալու պարագայում ՀՀ-ում ՋԼՄ-ների խնդիրները կարելի է վերլուծել քաղաքական և այդուհետ միայն՝ իրավական հիմքերի տեսանկյունից: Ընտրված հաջորդականությունը պատահական չէ, քանի որ քաղաքական հիմքերը, իրենց հերթին, կարող են իրավական հիմքերի գործառական արդյունավետության որոշակի նախադրյալ դառնալ: Պատմականորեն ձևավորվել են ՋԼՄ-ների գործունեության երեք հայեցակարգ՝ ավտորիտար, բացարձակ ազատություն և պատասխանատու ազատություն: Ավտորիտար և դրա ծայրահեղ տարբերակ ամբողջատիրական հայեցակարգը այն է, որ տեղեկատվական գործունեության ազատությունից կարող են օգտվել «իշխանական» ՋԼՄ-ները, որոնց տրվում է անսահմանափակ «իշխանություն»՝ իրականացնելու այն, ինչ բխում է իշխող ուժերի շահերից, որոնք էլ, իրենց հերթին, կարող են համահունչ լինել կամ չլինել պետության, ժողովրդի շահերին: Եվ քանի որ ընդդիմադիր ՋԼՄ-ների գործունեությունը կարող է իրական խոչընդոտ հանդիսանալ այդ շահերը կյանքի կոչելու ճանապարհին, ուստի այս դեպքում, այլընտրանքային տեսակետներն այս կամ այն չափով քննադատության են ենթարկվում, իսկ այլախոհները «վնասագերծվում» են տարաբնույթ՝ տնտեսական, իրավական և այլ ճանապարհներով: «Այն պետություններում,- գրում է Ս. Հարվին,- որտեղ ժողովրդավարական ինստիտուտները բացակայում են կամ թույլ են զարգացած, մեղիաքաղաքա-

կանության ոլորտը ամենից առաջ կարտացոլի իշխող քաղաքական և գործարար էլիտայի շահերը»²: Դա միանգամայն հասկանալի է, քանի որ քաղաքական տարբեր վարչակարգեր տարբեր սկզբունքների վրա են կառուցված, հետապնդում են տարբեր նպատակներ և դրանց հասնելու տարբեր ուղիներ առաջարկում: Ավտորիտար մոտեցումը գործնականում հատկանշական կարելի է համարել յուրաքանչյուր իշխող ուժի պարագայում, քանի որ վերջինիս բնորոշ է հասարակական կյանքի, դրա զարգացման հեռանկարների, առկա խնդիրների ու հաղթահարման ուղիների մասին սեփական պատկերացումների եթե ոչ բացարձակ, ապա ճնշող «մասի» ճշմարտության հանդեպ հավատը: Այն, որ ավտորիտար մոտեցումը կարող է հատկանշական լինել յուրաքանչյուր ուժի պարագայում, բնավ չի կարելի հերքել ժողովրդավարական պետությունների գոյության փաստով: Եթե մենք տարբերակենք «ավտորիտար մոտեցում» և «ավտորիտար պետություն» հասկացությունները, ապա շատ բան էականորեն կփոխվի: Ավտորիտար պետություններում ավտորիտար մոտեցումները կարծես քաղաքական կյանքի կազմակերպման սկզբունքներ են, մինչդեռ ժողովրդավարական պետություններում դրանք քաղաքական համակարգի անկատարությամբ պայմանավորված արատավոր երևույթներ են և ընկած չեն հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման հիմքում: Այս տեսանկյունից հարցը դիտարկելիս աներկբա կարող ենք ասել, որ հայաստանյան իրականության մեջ ՁԼՄ-ների հանդեպ ավտորիտար մոտեցումներն առկա են, մինչդեռ սա բնավ չի վկայում ՀՀ-ի՝ ավտորիտար պետություն լինելու մասին: «Ավտորիտար միտումները, -արդարացիորեն գրում է Ե. Պրոխորովը,-դրսևորվում են նաև ժողովրդավարական հասարակություններում, երբ «երիտասարդ» ժողովրդավարության պայմաններում ընտրությունների ժամանակ հաղթած ուժերը ցանկանում են որքան հնարավոր է շուտ և արագ հաստատել իրենց ծրագրային նպատակները, ինչը, սակայն, ենթադրում է «ճնշում» ընդդիմության վրա, հասարակության վրա վերջինիս ազդեցության հնարավորությունների նվազեցում, ինչպես նաև արգելքների ստեղծում իշխանությունների գործունեության ուղղությամբ հարձակումների համար՝ անկախ դրանց արդարացիության աստիճանից»³:

Ժողովրդավարական հասարակություններում ավտորիտար միտումները միանգամայն հնարավոր են, սակայն դա ոչ թե ավտորիտարիզմի կամ ամբողջատիրության անառարկելի առկայություն է փաստում, այլ վկայում է ժողովրդավարությունից որոշ չափով շեղվելու, ժողովրդավարությունը սահմանափակելու մասին՝ պայմանավորված քննադատությունը հաշվի չառնելու, ընդդիմության հետ կառուցողական երկխոսություն ծավալելու պատրաստ չլինելու հանգամանքով և

² Харви С. Как вырабатывается медиаполитика // "Медиа. Введение". М. 2005, с. 277.

³ Прохоров Е. Введение в теорию журналистики. М., 2003, с.163.

այլն: ՀՀ-ն՝ որպես «երիտասարդ» ժողովրդավարության երկիր, ևս ապահովագրված չէ ավտորիտար միտումներից, սակայն դրանք չեն կարող կասկածի տակ առնել մեր պետության մեջ ժողովրդավարական զարգացումների գոյության փաստը:

ՀՀ-ում բազմիցս քննարկվել է պետության կողմից տպագիր լրատվամիջոցների «սուբսիդավորման» հարցը, սակայն տարաձայնություններն ու անհամաձայնությունները երկար տարիներ շարունակվում են ու մնում անորոշ: Հիմնական հակասությունը սուբսիդավորման սկզբունքների և մեխանիզմների կամ պետական սուբսիդավորման անհրաժեշտության վերաբերյալ անհամաձայնություններն են: Պետական սուբսիդավորման գաղափարի հակառակորդներն իրենց տեսակետները փորձում են հիմնավորել այն բանով, որ այս պարագայում ՁԼՄ-ները կախվածության մեջ են ընկնելու պետությունից, և կարծես անխուսափելի է դառնալու լրատվական հոսքերի իշխանական մոնոպոլացումը: Այստեղ թերևս իրատեսական տարր կա, սակայն ամբողջությամբ ընդունելի չի կարող լինել: Ճիշտ է՝ ժողովրդավարական զարգացումների ճանապարհին գտնվող կամ անցումային շրջանի պետություններում ընթացող քաղաքական պայքարը գերծ չէ այնպիսի երևույթներից, երբ հակառակորդ կողմերը փոխադարձ մեղադրանքներ են ներկայացնում՝ ակնարկելով հակառակորդին սատարող ՁԼՄ-ների գործունեության ոչ անկախ լինելու հանգամանքը՝ ի դեմս պետական կամ օտարամուտ ֆինանսական հոսքերով «սնվելու» փաստի: Իրողություն, որը հաճախ նպաստում է հասարակական կարծիքը ցանկալի հուն ուղղորդելուն: Այսինքն, սակավ չեն այն դեպքերը, երբ, օրինակ, այս կամ այն հեռուստաընկերության պետական լինելու հանգամանքը դիտվում է նրա կախյալության և անազատության գրավական, իսկ լրատվական քաղաքականությունը՝ կանխակալ և միակողմանի: Ժողովրդավարական պետություն համարվող Ավստրիայում գործում է մամուլի պետական սուբսիդավորումը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս հանգամանքը ստվերում է մամուլի ազատության ցանկացած հնարավորություն, սակայն իրողությունն այն է, որ ժողովրդավարական Ավստրիայում թերթերի, ամսագրերի պետական սուբսիդավորումը չբացառեց մամուլի ազատության հնարավորությունը: Մամուլի պետական սուբսիդավորման կողմնակիցների հիմնական փաստարկն այն է, որ ժողովրդավարական պետության մեջ ազատ մամուլն իրականացնում է հասարակության կողմից իրեն վերապահված պարտականությունները, հետևաբար պետությունը շահագրգռված է մեծաթիվ թերթերի գոյությամբ, ինչը երաշխիք է տարակարծությունների արտահայտման: Այդ պատճառով է, որ պետությունը խնդիր ունի խրախուսելու բազմաթիվ թերթերի գոյությունը՝ նաև բազմակարծություն ապահովելու համար: Սակայն պետական սուբսիդավորումը կարող է ուղեկցվել նաև թերթերի ղեկավարության նկատմամբ գաղափարական պարտադրանքներով,

ինչը, հասկանալի է, պետք է բացատրվի: Այդ սկզբունքը Ավստրիայում գործում է 1975 թ.⁴: Այս և այլ երկրների օրինակներ մեզ «հուշում» են, որ պետական սուբսիդավորումն ինքնին չի կարող լինել ՋԼՄ-ների անագատության գրավական, սակայն ոչ ճիշտ մոտեցման պարագայում կարող է խոչընդոտել ՋԼՄ-ների արդյունավետ գործունեությունը:

Անցումային շրջանում գտնվող պետություններում ոչ հավաստի կամ կողմնակալ տեղեկատվության հանրայնացումը, տարածումը ոչ միայն սոսկ քաղաքական «նշանառության», այլև ընդհանուր գիտակցության հոգեբանական պատկերի դրսևորում են: «Տրանսֆորմացիոն հասարակություններում,-գրում է Է. Հարությունյանը,- ձևավորվում է մի ընդհանուր գիտակցություն, թե երկրի ու հասարակության առջև քաղաքական միակ պատասխանատուն իշխանությունն է»⁵: Այստեղից պարզ է դառնում, որ, օրինակ՝ հայաստանյան տպագիր մամուլում հակաիշխանական հրապարակումների առատությունը, իշխանության թիրախային քննադատությունը, առկա խնդիրները իշխանության գործունեությամբ բացատրելը պայմանավորված են եղել ոչ միայն քաղաքական մրցակցության, այլև անցումային շրջանի «հոգեբանական» առանձնահատկություններով: Հասկանալի է, որ իշխանությանը քննադատելու հիմքեր միշտ էլ կարելի է գտնել, սակայն ամեն բացթողում նրանց գործունեությամբ պայմանավորելը առնվազն միակողմանիություն է: Ավելին՝ հայաստանյան ՋԼՄ-ների գործունեության համատեքստում դրսևորվող լրատվական «ծայրահեղականությունը» հետևանք է ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր ՋԼՄ-ների գործունեության: Օրինակ՝ տարբեր տարիների ՀՀ-ում մի շարք կազմակերպությունների իրականացրած մոնիտորինգների արդյունքները փաստում են, որ ինչպես նախընտրական, այնպես էլ հետընտրական շրջաններում որոշակի խոչընդոտներ, ընդգծված անհավասարության դեպքեր են արձանագրվել, օրինակ՝ ընդդիմադիր և իշխանական թեկնածուներին եթերաժամեր տրամադրելու առնչությամբ և այլն: Ընդդիմադիր ուժերի արդար պահանջը՝ խտրական վերաբերմունքին վերջ տալը, միանգամայն հասկանալի է, սակայն ուշագրավն այն է, որ իշխանությունների հարուցած խոչընդոտները անպատասխան չեն մնացել և արժանացել են մամուլի համապատասխան «հակահարվածների»: Սա բացատրվում է այն բանով, որ վաճառքի ծավալներով մրցակից չունեցող ՀՀ ընդդիմադիր մամուլի մի մասում իշխանությունները ևս զրկված են եղել «ձայնի» իրավունքից, սակայն, միևնույն ժամանակ, արժանացել են մեծ ուշադրության խիստ քննադատության ձևով և բացառապես բացասական լույսի ներքո:

Լրագրողները, հատկապես ընդդիմադիր ՋԼՄ-ների, պարտավոր չեն զբաղվել իշխանության գովքով, սակայն իրավունք չունեն հասա-

⁴ Տե՛ս «Факты и цифры». Вена, 2000. Федеральная пресс-служба, էջ 216:

⁵ Է. Հարությունյան, Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը անցումային հասարակությունում, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 68:

րակությանը պարտադրել «չար իշխանություններ» կարծրատիպը, մանավանդ, երբ դա միակողմանի է: Նրանք պարտավոր են ներկայացնել այն, ինչ կա, և կունենանք այն, ինչ պետք է ունենանք: «Քաղաքական առաջնորդները,- ասում է ԵՄ մարդու իրավունքների հանձնակատար Թ. Համարբերը,- պետք է խուսափեն լրագրողներին որպես կառավարության կամ պետության ճակատագրական թշնամիների մատնացույց անելուց: Անհրաժեշտ է իշխանության ամենաբարձր մակարդակում ճանաչել, որ լրագրության նպատակը իշխանություն ունեցողներին գոհացնելը կամ կառավարության կարծիքը շեփոհարելը չէ: Լրատվամիջոցները կարևոր են «հանրային դիտորդի» դերը ստանձնելու և հասարակության մեջ կարևոր զարգացումների մասին տեղեկացնելու առումով՝ նույնիսկ այնպիսի տեղեկատվություն տրամադրելով, որը կարող է խանգարել հզորներին և հարուստներին»⁶:

Պարզ է, որ իշխանությունները կարող են թերթերում իրենց դրական «ներկայությունը» ապահվել ի դեմս տարբեր օրաթերթերի կամ շաբաթաթերթերի, սակայն, այնուամենայնիվ, դրանից ՀՀ ժողովրդավարացումը չի շահի: Վերջինիս պարագայում օրապահանջ են ոչ միայն խոսքի և զանգվածային լրատվության ազատության օրենսդրության կատարելագործումը և դա կյանքի կոչելու համար արդյունավետ մեխանիզմների մշակումը, այլև հրապարակումների, էլույթների և քարոզչական այլ միջոցների բովանդակության կառուցման սկզբունքների երկկողմ բարեփոխումը և այլն: Առավել առարկայական լինելու համար նշենք, որ, օրինակ՝ անձնավորված քննադատության փոխարեն պետք է որդեգրել գաղափարների բախում իրականացնելու առաջնահերթությունը, ինչը տեղեկատվություն սպառողներին հնարավորություն կտա լավ հասկանալու իրավիճակը, ճիշտ կողմնորոշվելու ու որոշումներ կայացնելու: Այլապես կարելի է ժողովրդավարությունը հոչակել որպես գերնպատակ, սակայն օգտագործել որպես քաղաքական «վահան» հասարակական կարծիքի նպատակային ուղղորդման, տարբեր շահեր ու հավակնություններ կյանքի կոչելու համար: Այսպիսի դրսևորումներով բավականին հարուստ է ժամանակակից քաղաքական կյանքը, հատկապես այն պետությունների պարագայում, որոնք դեռ ժողովրդավարական ավանդույթներ կերտելու ճանապարհին են: Գաղափարական քննադատության անհրաժեշտությունն այսօր հրատապ է: Եթե, օրինակ՝ իշխանական կամ ընդդիմադիր թերթերի քննադատությունը առավելապես կառուցվում է անձնավորվածության դիրքերից, ապա դժվար է ակնկալել ազգաբնակչության կամ ընտրազանգվածի քաղաքական հասունացում, քանի որ նրանք հիմնականում ստիպված են լինելու ընտրություն կատարել թեկնածուների կամ այսպես կոչված «անձնավորված» կուսակցությունների՝ առաջնորդների իրական կամ մտացածին «կենսագրությունների» միջև՝ մոռանալով, որ ապագայի բա-

⁶ «Հետաքննող լրագրողներին պետք է պաշտպանել» // Հայաստանում ԵՄ տեղեկատվական գրասենյակի լրատու, Եր., 2007, № 9, էջ 12:

րեփոխումը համակարգված և ծրագրային մոտեցման խնդիր է:

ԶԼՄ-ների արդյունավետ գործունեությունը չի կարելի պայմանավորել միայն տեսակետներ արտահայտելու, իշխանություններին ազատորեն քննադատելու և այսօրինակ այլ գործոններով: Այդ տրամաբանությամբ առաջնորդվելու պարագայում ստիպված կլինենք ընդունելու, որ, օրինակ՝ հայաստանյան զանգվածային լրատվական միջոցները (տվյալ դեպքում՝ տպագիր մամուլը) դրսևորում են բարձր արդյունավետություն, քանի որ սեփական տեսակետներն արտահայտելու, իշխանություններին բազմակողմ քննադատելու հնարավորություն ունեն: Իսկ մամուլի անազատության մասին տեսակետները կլինեն չարդարացված: Մինչդեռ, եթե տարբերակենք ԶԼՄ-ների «արդյունավետ գործունեության սկզբունքներ» և «արդյունավետ գործունեության պայմաններ» հասկացությունները, ապա զերծ կմնանք այդպիսի եզրակացություններից: Հայաստանի ԶԼՄ-ներում, ցավոք, նկատելի չէ անաչառ սկզբունքներով առաջնորդվելու քաղաքական պրակտիկա: Եթե հաշվի առնենք այն, որ ԶԼՄ-ների արդյունավետ գործունեության սկզբունքները հիմնականում խարսխված են ճշգրիտ, օբյեկտիվ ու անաչառ տեղեկատվության մատուցելու անհրաժեշտության գաղափարի վրա, ապա պարզ կդառնա, որ մեզանում ԶԼՄ-ներն արդյունավետ գործունեության տեսանկյունից առնվազն թերանում են:

Ինչ վերաբերում է ԶԼՄ-ների արդյունավետ գործունեության պայմաններին, ապա այս հարցում ևս ՀՀ-ն շահեկան վիճակում չէ, քանի որ, չնայած որոշ բարեփոխումներին՝ տարաբնույթ իրավական, տնտեսական և այլ բացթողումները շատ են, որոնք անհրաժեշտ է հետևողականորեն հաղթահարել: Այդ խնդիրները տարիներ շարունակ եղել են ՀՀ լրատվական իրականության «անբաժան» ուղեկիցները՝ ունենալով տարբեր դրսևորումներ, և շարունակում են մնալ լուծման կարոտ:

Թեպետ ՀՀ-ում ԶԼՄ-ների ազատության և արդյունավետ գործունեության համար գոյություն ունեն համապատասխան քաղաքական հիմքեր՝ ի դեմս ՀՀ ոչ ամբողջատիրական պետություն լինելու և ժողովրդավարական զարգացման ճանապարհ անցնելու վճռականության, սակայն լուրջ խնդիրներ կան ԶԼՄ-ների ինքնակարգավորման ուղղությամբ տարվելիք աշխատանքների առումով: Պատահական չէ, որ վերջին տարիներին պետական կառույցները սկսել են առավել լուրջ ուշադրություն դարձնել այդ խնդրին: Այս ուղղությամբ նախաքայլեր կատարվել են դեռևս 1990-ական թվականներին, սակայն վերջին տարիներին նկատելի են համապատասխան քայլերի աշխուժացման միտումներ⁷, ինչը, համոզված ենք, պայմանավորված է նաև ՀՀ լրատվական ոլորտում առկա լուրջ թերացումների, օրինակ՝ հայաստանյան ԶԼՄ-ների համապատկերում իրազեկ քաղաքացիներ ձևավորելու

⁷ Տե՛ս «ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի ձևավորման հեռանկարները Հայաստանում», Եր., 2004:

հրամայականով առաջնորդվողները շատ քիչ են կամ գրեթե չկան: 2007 թ. հունվարի 9 –ին Երևանի մամուլի ակումբը լրագրողական, մասնագիտական էթիկայի նորմեր մշակելու ուղղությամբ միասնական աշխատանքներ կատարելու կոչով դիմել էր ՀՀ լրատվական հանրությանը: Մշակվում է համապատասխան Վարքականոն, որը նույն թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ստորագրել էին ՀՀ և Արցախի 31 լրատվամիջոցներ⁸: Վարքականոնը բովանդակում է 6 հիմնական սկզբունքներ՝ դրանցից բխող պարտավորություններով: Դրանք են՝ 1. ճշգրտություն և անկողմնակալություն, 2. ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում, 3. խմբագրական անկախություն, հարգանք մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ, 4. հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ, 5. ազնվություն հանրության հետ հարաբերություններում⁹:

Թեպետ Վարքականոնի գոյությունը դրան հետևելու երաշխիք չի կարող լինել, այնուամենայնիվ նման փաստաթղթի առկայությունն արդեն իսկ ողջունելի է: Սա այն փաստաթուղթն է, որը կոչված է իրականացնելու ՁԼՄ-ների ինքնակարգավորման գործառույթը: Մինչդեռ եթե հաշվի առնենք այն, որ շատ ՁԼՄ-ներն ինքնակարգավորման այսօրինակ փաստաթղթեր չեն ստորագրել կամ ստորագրելով հանդերձ՝ դրանց չեն հետևում, ապա պարզ է դառնում, որ ՁԼՄ-ների գործունեությունն առհասարակ ենթակա է նաև անհրաժեշտ իրավական կարգավորման: ՁԼՄ-ների ինքնակարգավորման ուղղությամբ ՀՀ-ում կատարված քայլերը, անշուշտ, կարող են դրական ազդեցություն ունենալ լրատվական ոլորտում բարեփոխումների առումով: Այս տեսանկյունից պատահական չէ, որ աշխարհի տարբեր պետություններում (Ավստրիա, Բոսնիա և Հերցեգովինա, Էստոնիա, Գերմանիա, Բելգիա, Դանիա, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ, Կիպրոս, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Շվեյցարիա, Շվեդիա, Նորվեգիա, Նիդեռլանդներ, Սոնտենեգրո և այլն) ձևավորված մամուլի խորհուրդները, չնայած որոշ տարբերություններին, այնուամենայնիվ հետապնդում են գրեթե նույն նպատակը՝ գործող ՁԼՄ-ների ինքնակարգավորում, դրանց գործունեության համապատասխանեցում իրենց «առաքելությանը»¹⁰: Մամուլի ինքնակարգավորման առումով աշխարհում ամենահինը շվեդական մամուլի խորհուրդն է, որը հիմնադրվել է 1916 թ.¹¹: Մամուլի ինքնակարգավորման հարցերով որոշակի ավանդույթներ ունեցող համապատասխան կառույցներ ունեն նաև Շվեյցարիան, Գերմանիան, Նիդեռլանդները և այլն: Բազմաթիվ պետություններում գործող մամուլի

⁸ Տե՛ս «ՁԼՄ-ների ինքնակարգավորում. առաջին քայլերը Հայաստանում», Եր., 2007, էջ 3-4:

⁹ Տե՛ս «ՁԼՄ-ների ինքնակարգավորում 2008», Եր., 2008, էջ 14-17:

¹⁰ Տարբեր պետություններում մամուլի խորհուրդների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների մասին մանրամասն տե՛ս նույն տեղը, էջ 19-37:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 33:

խորհուրդների առջև ծառայած խնդիրների միջև, անշուշտ, կան նաև տարբերություններ: Դրանք ամենից առաջ պայմանավորված են այդ երկրների լրատվական ոլորտի ձեռքբերումներով և առկա մարտահրավերներով: Մեզանում ՁԼՄ-ները ինքնակարգավորման առաջին քայլերը նշանավորվեցին Վարքականոնի մշակմամբ, սակայն դա չի նշանակում, որ գործ ունենք մի անթերի փաստաթղթի հետ, որը ենթակա չէ փոփոխման: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ «վարքականոնները» կարող են փոփոխվել, հարստացվել նոր դրույթներով՝ պայմանավորված հասարակական-քաղաքական զարգացումներով:

Այսպիսով, արդյունավետ են այն մեխանիզմները, որոնք ոչ միայն ուղղորդում և ձևավորում են հասարակական կարծիքը, այլև «ապահովում» են վերջինիս «ինքնազարգացման» հնարավորությունը: Այս առումով պատասխանատվության զգալի մասը ՁԼՄ-ներինն է, քանի որ դրանք են այն կառույցները, որոնք ի գործ են իրագեկված քաղաքացիներ կրթելու և նպաստելու ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ արժեքային կողմնորոշումների ձևավորմանը: Նպատակ, որը կարող է իրականություն դառնալ այն դեպքում, երբ ՁԼՄ-ները կգործեն ազատության և արդյունավետ գործունեության ըմբռնման դիրքերից:

Բանալի բառեր – *ժողովրդավարացում, ՁԼՄ-ների արդյունավետ գործունեության սկզբունքներ և պայմաններ, սուբսիդավորում, հասարակական կարծիք, քաղաքական գործընթացներ*

АРГИНА ДАВТЯН – Формирование в СМИ общественного мнения в условиях демократизации РА. – В статье анализируются вопросы, теоретически и практически значимые в контексте современных реалий, в частности, связанные с формированием общественного мнения через средства массовой информации. Поскольку СМИ в Армении выступают основной структурой, формирующей общественное мнение, их свободное и эффективное функционирование имеет колоссальное значение для понимания протекающих в стране политических процессов. С этой точки зрения рассматриваются условия, необходимые СМИ для полноценной деятельности, и принципы, которых они придерживаются, формируя общественное мнение.

Ключевые слова: *демократизация, принципы и условия эффективной деятельности СМИ, субсидии, общественное мнение, политические процессы*

ARGINA DAVTYAN – Public Opinion Formulation through Mass Media in Terms of Democratization of the RA. – The article reviews theoretical and contemporary significant problems concerning public opinion formulation through mass media in democratic conditions. As mass media is the main source for the public opinion in Armenia, it is obvious how significant the concepts of the freedom and productive activity of mass media, which are important for political processes.

Meanwhile, the article reviews the principle concepts and conditions of productive activities of mass media, which plays the main role in the formulation of public opinion.

Key words: *democratization, concepts and conditions of productive activity of the mass media, subsidiation, public opinion, political processes*

**ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԵՐԿԲԵՎԵՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԱԼԵՔՍԱՆԴԻ ՍԱՐԳՍՅԱՆ

1988 թ. սկիզբ առած համազգային պայքարը Հայաստանում «մաքուր»¹ սոցիալական հարցադրումներից և պահանջներից վերաճեց քաղաքականի՝ առաջ քաշելով Ղարաբաղյան հիմնահարցի արդարացի հանգուցալուծման և Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու գաղափարը: Այս շարժմանը գուզընթաց երկրում ստեղծվեց նոր քաղաքական իրավիճակ: Դեռևս գորբաչովյան «վերակառուցման» և «հրապարակայնության» պայմաններում Խորհրդային Հայաստանում սկիզբ առավ միակուսակցական համակարգի փլուզման գործընթացը: Երկիրն անցում էր կատարում դեպի նոր՝ բազմակուսակցական ժողովրդավարության փուլ: Սակայն, ինչպես նշում է Գ. Քեոյանը, այս գործընթացի սկզբնական շրջանում Հայաստանում նկատելի էին երկբևեռ քաղաքական համակարգ ստեղծելու միտումներ²: Վերջինս պահանջում է ավելի հանգամանորեն և համակողմանի ուսումնասիրություն:

1980-ականների վերջին Հայաստանում քաղաքական դաշտը սկսել էր բաժանվել երկու մեծ խմբերի: Մի կողմից խորհրդային վարչակարգն էր, որը տեղում ներկայացնում էր Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, մյուս կողմից՝ անկախության ձգտող հակախորհրդային ուժերը, որոնք, չնայած տարբեր քաղաքական դիրքորոշումների և գաղափարախոսությունների առկայությանը, համախմբված էին մեկ նպատակի շուրջ, իսկ ղեկավար կենտրոնը «Ղարաբաղ» կոմիտեն էր:

Իշխանության և հասարակության միջև օրեցօր մեծացող բևեռացումը հանգեցրեց նրան, որ ՀԿԿ ղեկավարությունը, օգտագործելով իշխանական ռեսուրսները, փորձում էր ամեն կերպ խոչընդոտել ժողովրդական ընդվզումները և նախաձեռնությունները: Այդ նպատակով ՀԿԿ կենտրոնական կոմիտեի բյուրոն 1988 թ. մարտի 23-ին ընդունեց որոշում քաղաքացիների նախաձեռնությամբ զանգվածային միջոցառումներ անցկացնելու մասին, որը ենթադրում էր պետական մարմինների թույլտվությունը նմանատիպ ակցիաներ իրականացնելու համար:

¹ Տե՛ս **Մ. Մարգարյան**, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Եր., 2004, էջ 156:

² Տե՛ս **Գ. Քեոյան**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., 2002, էջ 252:

Նույն նիստում որոշվեց նաև հակաօրինական ճանաչել «Ղարաբաղ» կոմիտեն, որի գործողությունները հակասում էին ՀԽՍՀ սահմանադրությանը և ձեռք էին բերել վտանգավոր բնույթ³: Այս որոշումը, բնականաբար, միտված էր խոչընդոտելու հասարակության նախաձեռնողական քաղաքականությունը, քանի որ դժվար է պատկերացնել, որ խորհրդային իշխանությունները որևէ կերպ թույլ կտային նման միջոցառումներ անկախության ձգտող հասարակությանը: Ինչ վերաբերում է «Ղարաբաղ» կոմիտեն անօրինական ճանաչելու որոշմանը, ապա պետք է ասել, որ ապարդյուն քայլ էր, քանի որ այլևս անհնար էր կասեցնել մեծ թափ ստացած համաժողովրդական շարժումը:

Նոր կազմավորված քաղաքական միավորումների գործունեությունը խոչընդոտելուն էր ուղղված նաև ԽՄԿԿ քաղաքական կառուցվածքին ընդդիմադիր տարրերի դեմ հակազդեցության միջոցառումների մասին որոշումը, որն ընդունվեց ԽՄԿԿ կենտկոմի կողմից 1989 թ. հունվարին 30-ին⁴: Մինչ այդ, սակայն, 1988 թ. դեկտեմբերին և 1989-ի հունվարին խորհրդային վարչակարգի կողմից ձերբակալվեցին և Մոսկվայի բանտերում արգելափակվեցին «Ղարաբաղ» կոմիտեի շուրջ մեկ տասնյակ անդամներ: Հասարակական ճնշումների ներքո նրանք ազատ արձակվեցին 1989 թ. մայիսին, որից հետո անկախության համար պայքարը նոր թափ ստացավ⁵:

Կոմունիստական ուժերի դեմ մղվող պայքարում ինստիտուցիոնալ առումով կարևոր և շրջադարձային քայլ էր Հայոց համազգային շարժման առաջին համագումարը, որը հրավիրվեց 1989 թ. նոյեմբերին: Դրա նախաձեռնողը «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարներն էին, սակայն մասնակցում էին նաև մի շարք այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Անհրաժեշտ է փաստել նաև, որ մինչ այդ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Լ. Տեր-Պետրոսյանը, Ա. Մանուչարյանը և Ռ. Ղազարյանը հաջողության էին հասել Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի մասնակի ընտրություններում՝ դառնալով պատգամավորներ⁶: Սա աննախադեպ իրադարձություն էր ԽՍՀՄ պատմության ողջ ընթացքում, երբ ընդդիմադիր քաղաքական ուժի ներկայացուցիչները դառնում են ԳԽ պատգամավոր:

Ընտրական գործընթացում բեկումնային էին արդեն 1990 թ. մայիսին կայացած ընտրությունները, երբ ձևավորված խորհրդարանում քա-

³ Տե՛ս **Հ. Աբրահամյան**, Անցումը միակուսակցական համակարգից բազմակուսակցականության Հայաստանի Հանրապետությունում որպես ժողովրդավարական կարևոր գործոն // Պատմություն և մշակույթ, հայագիտական հանդես, Եր., 2013, էջ 4:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս **Է. Մինասյան**, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 90, 94:

⁶ Տե՛ս **Գ. Քեոյան**, Բազմակուսակցության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում 1990-2000 թթ. (պատմաքաղաքագիտական ակնարկ) // Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2001, 2(104), էջ 55:

ղաքական մեծամասնություն կազմեցին ՀՀ ներկայացուցիչները (ճիշտ է՝ թվաքանակով նրանք զիջում էին կոմունիստներին, սակայն վերջիններիս շարքերում նկատվում էր անհամաձայնություն, ինչի պատճառով չկարողացան խուսափել մասնատումից): Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը (օգոստոսի 4): Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից և ՀՀ վարչության անդամ Վազգեն Մանուկյանը օգոստոսի 13-ին նշանակվեց նախարարների խորհրդի նախագահ⁷: Այսպիսով, խորհրդային կարգերին ընդդիմադիր ՀՀ-ն արդեն 1990 թ. օգոստոսին կարողացավ իր ձեռքում կենտրոնացնել թե՛ գործադիր և թե՛ օրենսդիր իշխանությունը Խորհրդային Հայաստանում:

Հայաստանում կոմունիստական վերնախավից ղեկավար պաշտոններն անցան ազատական-ժողովրդավարական գաղափարների կրող և հայրենիքի անկախության համար պայքարող, ժողովրդի կողմից լիազորված նոր ընտրանուն⁸: Երկրում ստեղծվել էր երկակի մթնոլորտ. մի կողմից ՀՀ-ն արդեն Գերագույն խորհրդում ուներ քաղաքական մեծամասնություն, իսկ ՀԿԿ-ն հանդես էր գալիս ընդդիմադիր փոքրամասնության դերում, մյուս կողմից՝ ընտրությունների հիման վրա ձևավորված տեղական իշխանությունները շարունակում էին պայքարը հանուն անկախության և ընդդիմանում էին խորհրդային վարչակարգին ու Մոսկվայի վարած քաղաքականությանը, որը ճգնում էր կասեցնել Խորհրդային Միության անխուսափելի փլուզումը: Հայաստանում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ժողովրդի մեծ մասի աջակցությունը վայելող քաղաքական ուժը, օրինական ճանապարհով հասնելով իշխանության, այնուամենայնիվ շարունակում էր պայքարը հանուն այն գաղափարների, որոնց համար ի սկզբանե մուտք էր գործել քաղաքական ասպարեզ:

Այս գործընթացներում կարևոր իրադարձություն էր 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի ԳԽ-ի ընդունած՝ Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որով մեր երկիրը թևակոխում էր իր պատմության նոր փուլ, որտեղ ժողովրդավարության և մարդու ազատությունների գաղափարները դրվեցին պետականաշինության հիմքում⁹: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:

Հռչակագրի ընդունումից հետո Հայաստանի անկախության և ժողովրդավարության ուղին արդեն անշրջելի էր: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, չընդունելով ԽՍՀՄ ԳԽ՝ Խորհրդային

⁷ Տե՛ս **Է. Մինասյան**, նշվ. աշխ., էջ 104:

⁸ Տե՛ս **Մ. Մարգարյան**, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2006, էջ 300:

⁹ Տե՛ս **Հ. Քոթանջյան**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., 2010, էջ 641-642:

Միության պահպանման վերաբերյալ հանրաքվե անցկացնելու որոշումը և մերժելով դրա արդյունքների կիրառումը Հայաստանի տարածքում, 1991 թ. մարտի 1-ին ընդունեց որոշում «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին»¹⁰: 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն վերջնականապես ապահովեց հակախորհրդային ուժերի հաղթանակը Հայաստանում:

Սակայն մինչև անկախության հռչակումը կուսակցական համակարգի գործառության տեսանկյունից Հայաստանի քաղաքական կյանքում կարևոր իրադարձություն էր «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որը Գերագույն խորհուրդն ընդունեց 1991 թ. փետրվարի 16-ին: Այն ազատ գործելու հնարավորություն տվեց ինչպես ավանդական (ՀՅԴ, ՄԴՀԿ, ՀՌԱԿ), այնպես էլ նոր ստեղծված (ԱԻՄ, ԱԺՄ, ՀԴԿ) կուսակցություններին¹¹:

Այսպիսով, հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքով և անկախության հռչակումով Հայաստանում հաստատվեց բազմակուսակցական քաղաքական համակարգ: Միանգամից մի շարք կուսակցությունների առաջացման հիմնական պատճառը հակախորհրդային քաղաքական ուժերի ներկայացուցիչների շրջանում մեկ նպատակի, սակայն տարբեր միջոցների և գաղափարների առկայությունն էր: Ընդհանուր նպատակին հասնելուց և ընդհանուր հակառակորդին կորցնելուց հետո անկախության համար միասնաբար պայքարած քաղաքական ուժերն այլևս չկարողացան համախմբված շարունակել իրենց գործունեությունը, ուստի անխուսափելիորեն տրոհվեցին մի քանի կուսակցությունների:

Հետաքրքրական է, որ բազմակուսակցական համակարգի հաստատումից հետո ևս Հայաստանի Հանրապետությունում շարունակվում էին դրա նպատակահարմարության վերաբերյալ քննարկումները: Սակայն այս հարցի, ինչպես նաև դրա հետ սերտորեն կապված ընտրական համակարգի վերաբերյալ պատկերացումներն ու մոտեցումները հակասական էին և բանավեճերի տեղիք էին տալիս: Պատերազմական, տնտեսական շրջափակման, ինչպես նաև սոցիալական ծանր պայմաններում գտնվող փոքր երկրի համար վտանգավոր էր մասնատված և տարրալուծված հասարակությունը: Սակայն Հայաստանի քաղաքական դաշտում դրսևորվեցին հենց այդպիսի անմիաբան միտումներ, և արձանագրվեց կուսակցությունների թվի կտրուկ աճ, որը հասնում էր ծայրահեղ չափերի՝ առանձին տարիների անցնելով 100-ի սահմանը¹²: Այս պայմաններում քաղաքական համակարգի հիմնական

¹⁰ Է. Մինայան, նշվ. աշխ., էջ 124:

¹¹ Տե՛ս Գ. Քեոյան, Բազմակուսակցության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում 1990-2000 թթ., էջ 57:

¹² Տե՛ս Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 6:

խնդիրներից մեկը դարձավ կայունության պահպանումը:

Ըստ էության նույն իրավիճակն է նաև ներկայումս, ուստի պատահական չէ, որ հենց քաղաքական համակարգի կայունության պահպանման, ինչպես նաև գործադիր իշխանության երկատվածության հաղթահարման, իշխանության ճյուղերի միջև փոխհարաբերությունների հստակեցման, ընտրական համակարգի կատարելագործման և այլ հիմնախնդիրների կարգավորման վերաբերյալ դրույթներ է պարունակում ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի մշակած հայեցակարգը¹³: Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների հետ կայացած հանդիպման ընթացքում հանրապետության նախագահ Ս. Սարգսյանը նշեց, որ այն առաջադիմական փաստաթուղթ է ժողովրդավարության ամրապնդման առումով¹⁴:

Տվյալ ուսումնասիրության շրջանակներում հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայեցակարգի՝ «Իշխանությունների բաժանում և հավասարակշռում» (2.4.)¹⁵, «Ընտրական իրավունք և ընտրական համակարգ»¹⁶ հատվածները (2.5.):

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսանկյունից առաջարկվող սահմանադրական փոփոխությունները միտված են բարելավելու իշխանության ճյուղերի միջև փոխհարաբերությունները և կանոնակարգելու դրանց հարաբերությունները: Հստակ ուշադրություն է դարձվում գործադիր իշխանության երկատվածության հաղթահարման խնդրին, որը կարգավորելու համար առաջ է քաշվում գործադիր իշխանության գործառույթային լիազորություններով կառավարությանը օժտելու գաղափարը: Այն ձևավորվելու է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների հիման վրա: Իսկ նախագահին վերապահվում են գերազանցապես հակակշռող և զսպող գործառույթներ¹⁷: Այսպիսով, առաջարկվող սահմանադրական փոփոխությունների ընդունման պարագայում Հայաստանը պետք է անցում կատարի խորհրդարանական կառավարման համակարգի, որտեղ, ըստ Ռ. Դալի, իշխանության համար պայքարի հիմնական հարթակը դառնում են խորհրդարանական ընտրությունները¹⁸:

Համաձայն սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի

¹³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

¹⁴ Տե՛ս <http://www.president.am/hy/press-release/item/2015/03/13/President-Serzh-Sargsyan-meeting-with-members-of-Commission-Constitutional-Amendments/>

¹⁵ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 26:

¹⁶ Նույն տեղում, էջ 35:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 30:

¹⁸ Տե՛ս **Dahl R.** Patterns of Opposition // Political Oppositions in Western Democracies, ed. by R. Dahl, New Haven and London, 1966, էջ 336, 338-339:

2.4.3. Բաժնի («Կառավարման խորհրդարանական համակարգի ընձեռած հնարավորությունները») «Է» կետի՝ խորհրդարանի դերի բարձրացումը կնպաստի երկրում աստիճանաբար երկրնեռ դասական քաղաքական համակարգի ձևավորմանը¹⁹: Պետք է նշել, որ խորհրդարանի դերի բարձրացումը և կառավարման խորհրդարանական համակարգին անցումը ընտրություններում հաղթող կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին հնարավորություն են տալիս ստեղծելու միակենտրոն կառավարություն, որը կվայելի ժողովրդի մեծամասնության աջակցությունը և հստակ պատասխանատվություն կկրի խորհրդարանի առջև իր քաղաքական ծրագիրը արդյունավետ իրականացնելու համար: Ընդդիմությունն էլ իր հերթին օժտվում է լայն լիազորություններով՝ բարձրաձայնելու կառավարության բացթողումները: Պետական քաղաքականության ձախողման կամ թերացումների առկայության համար միայն կառավարության կողմից պատասխանատվություն կրելու փաստը հնարավորություն է տալիս ընդդիմությանը հետևողական աշխատանքի և այլընտրանքային ծրագրերի միջոցով փոխելու ժողովրդի վստահության հավասարակշռությունը և հաջորդ ընտրություններում պայքարել հաղթանակի համար: Տիրապետող քաղաքական ռեսուրսի համար պայքարի այս տարբերակը ապահովում է իշխանափոխության ժողովրդավարական եղանակը, որը նպաստում է երկրում քաղաքական կայունության պահպանմանը: Քաղաքական կայունությունը հատկապես կարևոր է այն համակարգերի համար, որոնք ամբողջովին չեն անցել ժողովրդավարական համախմբման փուլ և գործում են սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքական լուրջ մարտահրավերների պայմաններում:

Սահմանադրական բարեփոխումների համատեքստում անդրադառնալով ընտրական իրավունքին և ընտրական համակարգին՝ նախ պետք է նշել, որ այս փաստաթուղթը ուղղված է դրանց բարելավմանը: Հայեցակարգի այս բաժնում ևս անդրադարձ է կատարվում երկրնեռ քաղաքական համակարգի խթանմանը, սակայն ընտրական համակարգի առաջարկվող տարբերակի մասին հստակեցում չկա: Փորձը ցույց է տալիս, որ երկրնեռ քաղաքական համակարգը խթանելու համար պետք է ամրագրվի մեծամասնական ընտրական համակարգ²⁰: Սակայն դրա կիրառելիությունը Հայաստանում հնարավոր է՝ բանավեճերի և դժգոհությունների տեղիք տա, քանի որ մի շարք կուսակցությունների դիրքորոշումը այս հարցի շուրջ ամբողջովին համամասնական համակարգին անցնելն է²¹: Հարկ է ընդգծել նաև, որ ՀՀ սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում ԱԺ ընտրություններ

¹⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 35:

²⁰ Տե՛ս **Дюверже М.** Политические партии. М., 2013, էջ 270:

²¹ Տե՛ս <http://www.yerkir.am/am/news/78593.htm>

րի ժամանակ կայուն ընտրական համակարգի ապահովման համար շեշտվում է դրա հիմնական գծերի սահմանադրական ամրագրման նպատակահարմարությունը, և որպես օրինակ բերվում է եվրոպական մի շարք երկրների փորձը, որոնք համամասնական ընտրական համակարգ ունեցող խորհրդարանական երկրներ են, որի մասին նշվում է նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի» (Վենետիկի հանձնաժողով) եզրակացության մեջ²²: Առաջարկվում է կիրառել Հունաստանի և Մեծ Բրիտանիայի ընտրական փորձի միախառնված տարբերակ՝ համապատասխանեցնելով այն հաստատանյան պայմաններին: Այսպես, ընտրություններում հաղթող կուսակցությունը, բացի ընտրություններին իրեն կողմ քվեարկած ձայներին համապատասխան մանդատների քանակից, ստանում է որոշակի թվով հավելյալ մանդատ (օրինակ՝ Հունաստանում 50 մանդատ): Հաղթող կուսակցության կամ կուսակցական դաշինքին հաջորդած քաղաքական ուժը նույնպես ստանում է հավելյալ մանդատներ՝ ապահովելու համար առաջատար դիրք ընդդիմադիր կուսակցությունների շարքում (Մեծ Բրիտանիայում): Արդյունքում խորհրդարանում իշխանության ներկայացուցիչների կողքին իրենց տեղն ապահովում են թե՛ առաջատար ընդդիմադիր կուսակցությունը, որը իշխանությունների հիմնական քաղաքական քննադատի դերն է ստանձնում և թե՛ խորհրդարան մուտք գործելու արգելքը հաղթահարած մյուս կուսակցությունները, որոնք, որպես կանոն, համախմբվում են առաջատար ընդդիմադիր կուսակցության շուրջ: Վերջինի արտոնյալ դիրքը նպաստում է ընդդիմադիր դաշտի ավելի հեշտ կոնսոլիդացիային, երբ արդեն ի հայտ եկած առաջատարի շուրջ կառուցվում է ընդդիմադիր ուժը:

Ինչ վերաբերում է սահմանադրական բարեփոխումների ընդհանուր հայեցակարգին, ապա այստեղ պետք է հստակ պարզաբանվի «երկբևեռ քաղաքական համակարգ» հասկացությունը: Եթե դիտարկենք այն որպես իշխանություն-ընդդիմություն կառուցվածք, ապա պետք է ասել, որ Հայաստանում ընդդիմադիր դաշտը դեռ այնքան ինստիտուցիոնալացված չէ, որ քաղաքական ընդդիմադիր տարբեր ուժեր միավորվեն և հանդես գան միասնական քաղաքական ծրագրով: Իսկ եթե երկբևեռ քաղաքական համակարգը ենթադրում է երկկուսակցականություն, ապա հարկ է նշել, որ այդ տիպի կայացած համակարգերը անցել են ձևավորման և ամրապնդման երկար ու բնականոն ճանապարհ²³: Երկկուսակցական քաղաքական համակարգի ձևավորման

²² Տե՛ս «Opinion on the draft concept paper on the constitutional reforms of the republic of armenia», european commission for democracy through law (Venice commission), Strasbourg, 2014, էջ 9: [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)027-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)027-e)

²³ Տե՛ս **Potter A.**, Great Britain: Opposition with a Capital “O” // Political Oppositions in Western Democracies, ed. by R. Dahl, New Haven and London, 1966, էջ 3-33, **Dahl R.**, The American Opposition: Affirmation and Denial // Political Oppositions in Western Democracies,

համար կարևոր է նաև քաղաքական համապատասխան մշակույթի առկայությունը, որի ձևավորման համար անհրաժեշտ է ոչ թե սահմանադրական կամ օրենսդրական ամրագրում, այլ համապատասխան միջավայրի առկայություն, ինչը ժամանակի ընթացքում համակարգը կտանի այդ ուղղությամբ:

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մեկ այլ կարևոր դրույթ է Ազգային ժողովի մարմիններում ընդդիմության ներկայացուցիչների ներգրավումը՝ անկախ համամասնության սկզբունքի պահպանումից²⁴: Տվյալ դեպքում խոսքը ԱԺ փոխնախագահի կամ հանձնաժողովների նախագահների մասին է: Կարծում ենք՝ կարելի է օմբուդսմենի պաշտոնը նույնպես վստահել ընդդիմության ներկայացուցչին: Դա, նախ, լրացուցիչ լծակ կդառնա ընդդիմադիր քաղաքական ուժի համար իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս, և երկրորդ՝ ընդդիմության դերի բարձրացման պայման կարող է դառնալ:

Ամփոփելով պետք է ընդգծել, որ Հայաստանում երկրնեռ քաղաքական համակարգի դրսևորումները հատուկ էին 1980-ականների վերջին, երբ խորհրդային վարչակարգի և ՀԿԿ-ի դեմ պայքարում էին անկախության գաղափարի շուրջ համախմբված հակախորհրդային ուժերը՝ «Ղարաբաղ» կոմիտեի, իսկ հետագայում՝ դրա հիման վրա ձևավորված ՀՀԾ-ի գլխավորությամբ: Երկրնեռայնության նոր գաղափարները շրջանավեցին քաղաքական-հասարակական միջավայրում՝ կապված ՀՀ նախագահի 2013 թ. սեպտեմբերի 4-ի հրամանագրով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հրապարակման հետ: Եվ քանի որ հանձնաժողովը, բացի իրավական հարցերի լայն շրջանակից, անդրադարձ է կատարում նաև կուսակցական և ընտրական համակարգերի խնդիրներին, ապա կարծում ենք, որ դրա մեջ պետք է ընդգրկվեն նաև ժողովրդավարության, քաղաքական կուսակցությունների, կառավարման և ընտրական համակարգերի ոլորտում մասնագիտացած քաղաքագետներ՝ նշված քաղաքական հիմնահարցերի համակողմանի և խորքային ուսումնասիրությունը ապահովելու համար: Խնդրի լուծման մեկ այլ տարբերակ են հանձնաժողովի և վերոնշյալ մասնագետների, քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հանդիպում-քննարկումները:

Բանալի բառեր – քաղաքական համակարգ, քաղաքական կուսակցություն, կուսակցական համակարգ, ժողովրդավարություն, սահմանադրություն, երկրնեռ համակարգ, Ազգային ժողով, քաղաքական ընդդիմություն, ընտրական համակարգ

ed. by R. Dahl, New Haven and London, 1966, էջ 34-69:

²⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 34:

АЛЕКСАНДР САРГСЯН – *Формирование в Армении оппозиционных партий и признаки двуполярной политической системы.* – В статье охарактеризована ситуация в Армении в годы, предшествовавшие краху СССР, когда политические силы, возглавляемые комитетом «Карабах», выступили против КПСС и советского режима. Кроме того, анализируется концепция конституционной реформы, разработанная специализированной комиссией при президенте РА и опубликованная в октябре 2014 г. Особое внимание уделено принципу разделения властей, системе сдержек и противовесов, избирательной системе, а также роли политической оппозиции.

Ключевые слова: *политическая система, политическая партия, партийная система, демократия, конституция, биполярная система, Национальное Собрание, политическая оппозиция, избирательная система*

ALEKSANDR SARGSYAN – *The Process of Formation of Opposition Parties and the Manifestations of Bipolar Political System in Armenia.* – The subjects of the article are the problem of the formation of oppositional political parties in Armenia and the features of bipolar political systems. The situation in the final period of the USSR's history is presented during which anti-Soviet political groups led by Karabakh committee struggled against Communist party and Soviet Regime.

The concept of constitutional reforms adopted by the Specialized Commission for Constitutional Amendments adjunct to the RA President is also analyzed in the article. Particularly the attention is focused on the issues of the principle of separation of power, checks, and balances, electoral systems as well as the role of political opposition.

Keywords: *political system, political party, party system, democracy, constitution, bipolar system, National Assembly, democracy, political opposition, electoral system*

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Ջ. Կիրակոսյան, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար - 1914 թ.): Երևան : ԵՊՀ հրատ., 2014, 400 էջ:

Դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան, պատմաբան-միջազգայնագետ, պատմագիտության դոկտոր, ԵՊՀ պրոֆեսոր Արման Ջոնի Կիրակոսյանը լույս է ընծայել հերթական ծանրակշիռ մենագրությունը՝ նվիրված Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցին: Գիտնականների և ընթերցող լայն հասարակայնության դատին ներկայացված այս աշխատության կարևորագույն արժեքը նախ այն է, որ հեղինակը չի գնացել տրորված ճանապարհով և շեշտը դրել է նշված ժամանակաշրջանի՝ դեռևս լուսաբանման կարոտ խնդիրների բացահայտման վրա: Առանց վերապահության կարելի է ասել, որ պրոֆեսոր Ա. Կիրակոսյանի մենագրությունը նոր լույս է սփռում արևմտահայության վիճակի վրա ամերիկա-օսմանյան հարաբերությունների համատեքստում: Սույն աշխատությունը հայ պատմագիտության մեջ առաջին փորձն է (և, իհարկե, հաջողված), որտեղ համակողմանի ու խորքային քննության են ենթարկվում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները, Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, միսիոներական շարժման սկիզբն ու աշխատանքի ուղղությունները, ամերիկյան դիվանագիտության և բողոքականների առաքելական գործունեությունը: Առհասարակ հարկ է արձանագրել, որ պրոֆեսոր Ա. Կիրակոսյանը տուրք չի տալիս հիմնախնդրի նկատմամբ հայ պատմագիտության մեջ ձևավորված կարծրատիպերին, այլ օբյեկտիվորեն ցույց է տալիս իրողությունների ճշգրիտ պատկերը: Նրա մենագրությունը մեծապես շահում է նաև այն առումով, որ թեմային առնչվող հարցերը քննարկվում են ժամանակի միջազգային հարաբերությունների համատեքստում:

Առաջին գլխում («ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքները (1776-1914 թ.)») հեղինակը վերլուծում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունները՝ սկսած Ամերիկյան հեղափոխությունից և անկախության ձեռքբերումից մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակաշրջանը: Այդ հիմնախնդրի խորը և համակողմանի լուսաբանումը հնարավորություն է տվել հեղինակին ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունների համատեքստում բացահայտելու արևմտահայության, Հայկական հարցի նկատմամբ ամերիկյան կառավարության և հասարակական կազմակերպությունների

դիրքորոշումը: Այստեղ հեղինակը վեր է հանում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեթոդաբանական այն հիմքը, որը քննարկվող պատմական ժամանակաշրջանում էական դեր է խաղացել ամերիկյան արտաքին քաղաքականության ուղղորդման, իսկ մեր օրերում՝ անցյալը հասկանալու առումներով: Ա. Կիրակոսյանը գրում է. «ԱՄՆ-ի 19-րդ դարի արտաքին քաղաքականությունն անվանում են նաև «ռեալիստական»՝ ազգային շահի պաշտպանությանը միտված քաղաքականություն, որը ժամանակի ընթացքում ենթարկվեց ձևափոխությունների և Առաջին աշխարհամարտի սկզբնական շրջանում դարձավ «իդեալիստական» ու ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի անունով կոչվեց «Վիլսոնյան»: «Իդեալիստական ինտերնացիոնալիզմի» նոր ուղեգիծը նշանավորեց ԱՄՆ-ի մուտքը համաշխարհային քաղաքականություն՝ աշխարհում խաղաղություն և ժողովրդավարություն ապահովելու նպատակով» (էջ 9): Ընդամին, խիստ համոզիչ է այն, որ հեղինակը, մինչև բուն թեմային անցնելը, առաջին գլխում արձարծում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբնավորման հիմնախնդիրները, որոնք ընթերցողին ամբողջական պատկերացում են տալիս այդ երկրի որդեգրած ռազմավարության մասին:

Աշխատության երկրորդ գլխում («ԱՄՆ-Օսմանյան կայսրություն միջպետական հարաբերությունների սկիզբը և միսիոներական շարժումը») հեղինակը ներկայացնում է Օսմանյան կայսրության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության ձևավորումն ու առնչությունների սկզբնական շրջանը (այն սկիզբ է առնում 19-րդ դարի առաջին կեսից), ինչպես նաև դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ու առաջին միջպետական փաստաթղթերի ստորագրումը, ամերիկյան դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների հիմնադրումն ու գործունեությունը: Գլխի երկրորդ ենթաբաժնում հեղինակը լուսաբանում է Օսմանյան կայսրությունում ամերիկյան միսիոներների ձեռնարկած առաջին քայլերը, դրանց շարժառիթները, քրիստոնյաների, մասնավորապես՝ արևմտահայության շրջանում նրանց ծավալած աշխատանքը, բողոքական համայնքի ձևավորումը, միսիոներական առաքելությունների տարածումը դեպի արևելյան քրիստոնեաբնակ շրջաններ ու հատկապես Արևմտյան Հայաստան: Ինչպես ցույց է տալիս Ա. Կիրակոսյանը, ԱՄՆ-ը, թերևս իր կամքից անկախ, «համիդյան գուլումի» տարիներին ակամա մասնակից դարձավ «Հայկական հարցում» «առևտրական շահերի, ԱՄՆ-ի քաղաքացիների, մասնավորապես միսիոներների անվտանգության պաշտպանության» գործին: Այդ առումով ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանության «գործուն» վկաներից է: Հիրավի, ինչպես նշում է հեղինակը, «ամերիկյան դիվանագետների և միսիոներների զեկուցագրերը կարևորագույն սկզբնաղբյուր են օսմանյան իշխանությունների կողմից կոտորածների կազմակերպման և իրակա-

նացման ուսումնասիրության հարցում» (էջ 156):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում աշխատանքի վերջին գլուխը, որը փաստորեն ընդգրկում է 1897-1914 թթ. զանգվածային կոտորածների և Մեծ եղեռնի նախապատրաստման ժամանակաշրջանը, և այդ շրջագծի մեջ՝ Օսմանյան կայսրության ու հայության հանդեպ ԱՄՆ-ի որդեգրած քաղաքականությունը, որը, թերևս, իրականանում էր Մակ Քինլիի, Թեոդոր Ռուզվելտի և Ուիլյամ Թաֆտի «առևտրական դիվանագիտության քաղաքականության» ընդհանուր ընկալման տրամաբանությամբ: Այստեղ ամբողջ հասակով հառնում է «օսմանյան ճիվաղը»՝ համակված հայ ժողովրդին իր բիրլիական բնօրրանում ոչնչացնելու թուրքական մարմաջով: Ինչպես փաստում է գրքի հեղինակը, օսմանյան «իշխանությունները հարկ էին հավաքում նաև կոտորածների ժամանակ սպանվածների ազգականներից» (էջ 322): «Երիտթուրքական հեղափոխությունից հետո,- գրում է Ա. Կիրակոսյանը,- ԱՄՆ-Օսմանյան կայսրություն առևտրական հաշվեկշիռը զգալի աճ արձանագրեց: Այն 12,7 մլն դոլարից 1908 թ. աճեց մինչև 25.5 մլն դոլար 1913 թ.: Երիտթուրքական կառավարությունն ԱՄՆ-ի մեջ մեծ ներուժ ունեցող հզոր դաշնակից էր գտել, որը կարող էր դառնալ եվրոպական տերությունների դեմ ուղղված կարևոր հակակշռող լծակ» (էջ 335): Մանրակրկիտ և վավերագրերի հիման վրա գրված այս հատվածը հույժ կարևորություն է ստանում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի տարում, քանի որ նորովի է ներկայացվում ԱՄՆ-ի քաղաքականությունը մեզ հետաքրքրող ոլորտներում կոնկրետ գործող անձանց, օրինակ՝ Հենրի Մորգենթաուի պարագայում: Մենագրությունը ունի նաև անհրաժեշտ ծանոթագրություններ, որոնց միջոցով ընթերցողը կարող է տեղեկություններ քաղել օգտագործված աղբյուրների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Օսմանյան կայսրության, եվրոպական տերությունների պետական ու քաղաքական գործիչների, դիվանագետների, ամերիկյան ու հայ հասարակական և կրոնական գործիչների կյանքի ու գործունեության մասին:

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԱՐՄԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ** – Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, արտակարգ և լիազոր դեսպան
АРМАН НАВАСАРДЯН – заведующий кафедрой мировой политики и международных отношений Российско-армянского (Славянского) университета, Чрезвычайный и Полномочный посол
ARMAN NAVASARDYAN – Head of the Chair of World Politics and International Relations, Russian-Armenian (Slavonic) University, Ambassador Extraordinary and Plenipotentiary
Էլ. հասցե՝ anavasardian@gmail.com
2. **ԷՂՈՒԱՐԴ ՀԱՎՈՔՅԱՆ** – Նիժնի Նովգորոդի Լոբաչևսկու անվան պետական համալսարանի միջազգային հարաբերության ֆակուլտետի ասպիրանտ
ЭДУАРД АКОБЯН – аспирант Нижегородского государственного университета им. Лобачевского
EDUARD HAKOVYAN – PhD student of the faculty of International Relations, Lobachevsky State University of Nizhni Novgorod
Էլ. հասցե՝ h-edo@mail.ru
3. **ԱՆՋԵԼԱ ԷԼԻԲԵԳՈՎԱ** – քաղաքագիտության թեկնածու, ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ, Արտաքին կապերի ծառայության ղեկավար
АНЖЕЛА ЭЛИБЕГОВА – кандидат политических наук, руководитель службы зарубежных связей и информации Аппарата президента РА
ANZHELA ELIBEGOVA – PhD, Head of the Department of the “Public Relations and Information Centre” of RA Presidential Administration
4. **ԱՐՄԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ** – ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ
АРМИНЕ ОБСЕПЯН – аспирантка кафедры политических институтов и процессов ЕГУ
ARMINE HOVSEPYAN – PhD student of the Chair of Political Institutions and Processes, YSU
Էլ. փոստ՝ armine.h04@gmail.com
5. **ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ** – քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ
ХАЧИК ГАЛСТЯН – кандидат политических наук, доцент кафедры истории и теории политической науки ЕГУ
KHACHIK GALSTYAN – PhD, Associate Professor of the Chair of Theory and History of Political Science, YSU
6. **ԳԱՐԻԿ ՔԵՐՅԱՆ** – քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ
ГАРИК КЕРЯН – доктор политических наук, профессор, заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ
GARIK KERYAN – Sc. D. in Political Sciences, Professor, Head of the Chair of Political Institutes und Processes, YSU
Էլ. փոստ՝ – garik_keryan@mail.ru, g.keryan@mail.y su.am

7. **ԱՐԳԻՆԱ ԴԱՎԹՅԱՆ** – քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքագիտության պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ
АРГИНА ДАВТЯН – кандидат политических наук, ассистент кафедры теории и истории политической науки ЕГУ
ARGINA DAVTYAN – PhD, Assistant Professor of the Chair of Theory and History of Political Science, YSU
Էլ. փոստ՝ – davtyanargina@gmail.com
8. **ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍՅԱՆ** – ԵՊՀ քաղաքագիտության տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ
АЛЕКСАНДР САРГСЯН – аспирант кафедры теории и истории политической науки ЕГУ
ALEKSANDR SARGSYAN – PhD student of the Chair of Theory and History of Political Science, YSU
Էլ. փոստ՝ – aliksargsyan@ysu.am
9. **ԳԵԴԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ** – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան
ГЕГАМ ПЕТРОСЯН – доктор исторических наук, профессор, декан факультета международных отношений ЕГУ
GEGHAM PETROSYAN – Sc. D. In History, Professor, Dean of the Faculty of International Relations, YSU

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
INTERNATIONAL RELATIONS**

Արման Նավասարդյան – Նոր աշխարհակարգի մարտահրավերները փոքր պետությունների դիվանագիտությանը..... **3**
Арман Навасардян – Вызовы нового миропорядка дипломатии малых государств
Arman Navasardyan - The Challenges of the New World to the Diplomacy of Small Countries

Էդուարդ Հակոբյան – Հայաստանի և Ֆրանսիայի միջև առևտրատնտեսական համագործակցության առանձնահատկությունները (ռու.).... **12**
Эдуард Акобян – Особенности торгово-экономического сотрудничества между Арменией и Францией
Eduard Hakobyan – The Peculiarities of Trade and Economic Cooperation between Armenia and France (rus.)

Անժելա Էլիբեգովա – Ադրբեջանում հակասեմականության հիմնախնդրի շուրջ (ռու.) **17**
Анжела Элибегова – К проблеме антисемитизма в Азербайджане
Anzhela Elibegova – On anti-Semitism in Azerbaijan (rus.)

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE**

Հայոց ցեղասպանություն-100 Геноцид армян-100 Armenian Genocide-100
Արմինե Հովսեփյան – Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության արդի դրսևորումները Թուրքիայում **25**
Армине Овсепян – Новые явления в турецкой политике отрицания Геноцида армян
Armine Hovsepyan – The Modern Demonstrations of the Armenian Genocide Denial Policy in Turkey

Խաչիկ Գալստյան – Քաղաքական երկխոսությանին հաղորդակցման առանձնահատկությունները **35**
Хачик Галстян – Особенности диалоговой политической коммуникации
Khachik Galstyan – The Peculiarities of the Dialogical Political Communication

Գարիկ Քերյան – Դեյվիդ Աթկինսոնի զեկույցը Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (2005 թ.) **49**
Гарик Керян – Доклад Дэвида Аткинсона в Парламентской ассамблее Совета Европы (2005)
Garik Keryan – David Atkinson's Report at the Parliamentary Assembly of the Council of Europe (2005)

<i>Արգինա Դավթյան</i> – Հասարակական կարծիքի ձևավորումը ՋԼՄ-ում ՀՀ ժողովրդավարացման պայմաններում.....	59
<i>Аргина Давтян</i> – Формирование в СМИ общественного мнения в условиях демократизации РА	
<i>Argina Davtyan</i> – Public Opinion Formulation through Mass Media in Terms of Democratization of the RA	
<i>Ալեքսանդր Մարգարյան</i> – Ընդդիմադիր կուսակցությունների ձևավորման գործընթացը և երկրի քաղաքական համակարգի դրսևորումները Հայաստանում	68
<i>Александр Саргсян</i> – Формирование в Армении оппозиционных партий и признаки двухполярной политической системы	
<i>Aleksandr Sargsyan</i> – The Process of Formation of Opposition Parties and the Manifestations of Bipolar Political System in Armenia	

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ
BOOK REVIEW

<i>Գեղամ Պետրոսյան</i> – Ա. Ջ. Կիրակոսյան, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար - 1914 թ.): Երևան: ԵՊՀ հրատ., 2014, 400 էջ.....	77
<i>Гегам Петросян</i> – А. Д. Киракосян. Внешняя политика США и западное армянство (XIX в. – 1914 г.). Ереван: издательство ЕГУ, 2014. 400 с.	
<i>Gegham Petrosyan</i> – A. J. Kirakosyan, US Foreign Policy and Western Armenians (XIX century – 1914). Yerevan. YSU Press, 2014, 400p.	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	80
Сведения об авторах	
Information about the Authors	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Ժամանցորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 106
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 106
Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 30. 04. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: